


ԱՊԱԳԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ Է

ԴԵՊԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐ ՏՆՕՐԻՆՈՒՄ

Մասնավորեցման դեմ պայքարը հանգեցրեց բարեփոխման հզոր ալիքի՝ (վերա)համայնքայնացման: (վերա)համայնքայնացում կամ (վերա)պետականացում եզրույթը նշանակում է ծառայությունների վերադարձ դեպի պետական, հանրային սեփականություն, ինչպես նաև նոր հանրային ծառայությունների ստեղծում: Վերջին տարիներին Transnational Institute-ի և գործընկեր կազմակերպությունների կողմից գրանցվել է ավելի քան 1400 հաջողված (վերա)համայնքայնացման դեպք 58 երկրների մոտ 2400 քաղաքներում:

Սակայն այս հետադարձությունն ավելին է, քան լոկ թվեր: Այն ցույց է տալիս, որ հանրային ծառայություններն այսօր առավել կարևոր են, քան երբևէ, բնապահպանական աղետների, խորացող անհավասարությունների և քաղաքական ճգնաժամերի պայմաններում: COVID-19-ի ճգնաժամը նույնպես ակնհայտ դարձրեց կոշտ խնայողության քաղաքականության, սոցիալական ծրագրերի կրճատման ու մասնավորեցված առողջապահական համակարգի սարսափելի հետևանքները, բայց նաև ապացուցեց, որ հանրային ծառայություններն ու դրանք մատուցող աշխատողներն են առողջ ու դիմակայուն հանրության հիմնասյունը: Բայց տարիներ ի վեր իրականացվող մասնավորեցումներն ու խնայողությունները խարխլել են այս հիմնասյունը՝ զրկելով այն ժողովրդավարական կառավարումից և բավարար ֆինանսավորումից: Մասնավորեցումը ձախողվել է և 21-րդ դարում միջազգային շարժումն ընտրում է (վերա)համայնքայնացումը՝ որպես հանրային սեփականության որոշիչ գործիք: Այս գրքում գետեղված պատմությունները կտեղափոխեն մեզ նոր երկրներ և կծանոթացնեն մեզ տարբեր ոլորտների հետ՝ ցույց տալով, թե որքան բազմազան են (վերա)համայնքայնացմանն ուղղված ջանքերը: Ամեն (վերա)համայնքայնացում ունի իր ուրույն խնդիրները՝ Եգիպտոսի աղբահանությունից մինչև Չիլիի համայնքային դեղատներ և ԱՄՆ հեռավոր համայնքներ, որտեղ մարդկանց կյանքը բարելավվեց գերարագ ինտերնետի շնորհիվ: Միասնական ջանքերով քաղհասարակության կազմակերպությունները, արհմիություններն ու տեղական իշխանությունները սովորում են, թե ինչպես տարբեր մակարդակներում մեծացնել



ժողովրդավար հանրային սեփականության բաժինը և նոր ուղիներ բացել համայնքահեն ու բնապահպանական առումով պատասխանատու հանրային ծառայությունների համար:

Ներբեռնեք գիրքն
ամբողջությամբ՝
tni.org/futureispublic

Ձեզ է ներկայացվում *'The Future is Public: Towards Democratic Ownership of Public Services'* (Ապագան հանրային է. դեպի հանրային ծառայությունների ժողովրդավար սեփականություն) գրքի ամփոփագիրը: Գրքի 15 գլուխներում մեզ տրամադրվում են տեղեկություններ աշխարհում տեղի ունեցող տարատեսակ (վերա)համայնքայնացման գործընթացների մասին՝ ներառյալ դրանց խնդիրները, հեռանկարներն ու արդյունքները:

TNI.ORG/FUTUREISPUBLIC

(Վերա)համայնքայնացման մասին գլոբալ հետազոտությունը 2019 հոկտեմբեր ամսվա դրությամբ ներառում էր 1408 դեպքերի նկարագրություն: Տվյալները հավաքագրվել են հեղինակների համատեղ ջանքերի շնորհիվ, իսկ 22 հետազոտող իրականացրել են հավաքագրված տվյալների ստուգում: Հետազոտության մեթոդաբանությանը մանրամասն ներկայացված է գրքի նախաբանում և վերջաբանում: Տվյալների շտեմարանը հասանելի է հետևյալ հղումով՝ <https://publicfutures.org>: Ինտերակտիվ շտեմարանը մշակված է Գլազգոյի համալսարանի հետ մեկտեղ: Նոր դեպքեր ի հայտ գալուն պես դրանք ևս հայտնվելու են շտեմարանում:

ՕՐԻԳԻՆԱԼ ԴԻՉԱՅՆԸ՝

Karen Paalman

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՌԸՆԶԿՈՂ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ՝ Satoko Kishimoto (satoko@tni.org) կամ Lavinia Steinfort (l.steinfort@tni.org), Transnational Institute.

The Transnational Institute-ը (TNI) միջազգային հետազոտական ու իրավաբանական ինստիտուտ է, որ միտված է կառուցելու արդար, ժողովրդավար և կայուն մոլորակ: Ավելի քան 40 տարի TNI-ը յուրովի կապող օղակ է հանդիսանում սոցիալական շարժումների, գիտնականների և քաղաքականություն մշակողների միջև:

ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳԱՆՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ Արսեն Իգիթյան, Հայաստանի պետիիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն

Հայերեն թարգմանությունը հնարավոր է դարձել EPSU-ի (The European Federation of Public Service Unions) աջակցությամբ

PUBLISHED BY




Օգտագործվող տերմիններ և եզրույթներ

(Վերա)համայնքայնացում, կամ (ռե)մունիցիպալիզացիա	(Վերա)համայնքայնացում են անվանում ինչպես նախկինում մասնավորեցված հանրային ու համայնքային ծառայությունների հետ վերցնելն ու նորից դրանք պետական/համայնքային դարձնելը, այնպես էլ նոր համայնքային հիմնարկների ստեղծումը: Եզրույթն ավելի լայն իմաստ ունի, քան ապամասնավորեցումը կամ պետականացումը, քանի որ այն արտահայտում է հիմնականում քաղաքների ու ՏԻՄ-երի կողմից համայնքային ծառայությունների վերակառուցումը՝ դրանք մասնավորից բերելով համայնքային կամ պետական դաշտ
Պետություն-մասնավոր գործընկերություն - ՊՄԳ	ՊՄԳ են անվանում պետության կամ համայնքային իշխանության և մասնավոր բիզնեսի հետ համատեղ ծրագրերի իրականացումը կամ ծառայությունների մատուցումը: Հաճախ այդ եզրույթի տակ են ներկայացնում նաև մասնավորեցման պրոցեսները կամ պետական գնումների գործընթացներն ու աուքսորսինգը
Աուքսորսիզ	Օգտագործվում է նաև պատվիրակում եզրույթը: Աուքսորսինգ են անվանում այն երևույթը, երբ որևէ կազմակերպություն (թե՛ մասնավոր, թե՛ պետական) իր աշխատանքի, մատուցվող ծառայությունների կամ արտադրության մի մասը պատվիրում է կատարել այլ ընկերության: Երևույթը թափ է առել 80-ականների վերջին, համաշխարհային շուկայի ազատականացման ու գլոբալիզացման արդյունքում ու հիմնականում ծախսերի կրճատման ու շահույթների մեծացման նպատակ է հետապնդում
Ինսորսինգ	Աուքսորսինգի հակառակ գործընթացն է, երբ կազմակերպության կողմից այլ կազմակերպությանը պատվիրակված աշխատանքը հետ է բերվում, և կազմակերպությունն ինքն է սկսում կատարել այդ աշխատանքը
Համայնքային հարստության կերտում (community wealth-building)	80-ականներին ի հայտ եկած հասկացություն է, որը նշանակում է տնտեսության այնպիսի զարգացում և այնպիսի բարեփոխումներ, որպեսզի տնտեսական զարգացումը լինի մարդակենտրոն, ծառայի հանրությանը, իսկ գններացված շահույթն օգտագործվի տեղի համայնքի ու բնակիչների համար հանրային բարիք ստեղծելու վրա: Հիմնական կոնցեպտներն են՝ ընկերությունների կոլեկտիվ ու ժողովրդավար ղեկավարումը, արդարացի աշխատանքային քաղաքականությունը, պրոգրեսիվ գաղափարների հիման վրա պետական գնումներն ու մրցույթները, ռեսուրսների սոցիալապես արդյունավետ օգտագործումը, շահույթի ներդրումը համայնքի զարգացման մեջ
Արդար (կամ պատշաճ) անցում (Just Transition)	Արհմիութենական շարժման կողմից ստեղծված գաղափար է: Այն իրենից ներկայացնում է սոցիալական ու քաղաքական տարատեսակ միջամտություններ, որոնք կկարողանան

	ապահովել աշխատողների կարիքներն ու իրավունքները, երբ երկիրը անցում կատարի կայուն, մաքուր և բազմազան տնտեսության: Այդպիսի տնտեսական անցումը, օրինակ, կարող է նշանակել վառելիքային արդյունաբերությունից մաքուր արդյունաբերության անցումը
Էներգետիկ աղքատություն	Դեպի Էներգիա և Էներգետիկ ծառայություններ մուտք չունենալը
Տարածաշրջանային համերաշխություն	Մեկ երկրի ներսում տարբեր տարածաշրջանների միջև քաղաքական ու սոցիալական ներդաշնակությունը, հանրային ծառայությունների որակի, բնական ռեսուրսների ու տնտեսության արդար ու հավասար վերաբաշխումը տարբեր տարածաշրջանների միջև՝ անկախ աշխարհագրական կամ մշակութային տարբերություններից
Զրո աղբ	Սկզբունքների բազմություն, համաձայն որոնց կենսագործունեությունը պետք է կազմակերպել այնպես, որ դրա ընթացքում չարտադրվի աղբ: Նախատեսում է չվերամշակվող նյութերից և մեկանգամյա օգտագործման իրերից հրաժարվելը
Գլոբալ Հարավ	Վերջին ժամանակներում սա համաշխարհային քաղհասարակության, արհմիությունների, միջազգային կազմակերպությունների ու գիտական համայնքների կողմից օգտագործվող եզրույթ է, որը հիմնականում ունի նույն նշանակությունը, ինչ «երրորդ աշխարհի երկրներ» արտահայտությունը: Գլոբալ հարավ են անվանում ցածր եկամուտ ունեցող և աղքատ երկրները: Հիմնականում վերաբերվում է կենտրոնական ու հարավային Ամերիկային, Աֆրիկային, ասիական երկրների մեծ մասին, ԱՊՀ երկրներին: Հակառակը, Գլոբալ Հյուսիս տերմինով կոչում են զարգացած և հարուստ երկրներին՝ Հյուսիսային Ամերիկա, Եվրոպա, Ավստրալիա, Ճապոնիա, և այլն
Սոցիալական համախմբվածություն (social cohesion)	Հանրության տարբեր շերտերի ու խմբերի միջև փոխադարձ սոցիալական, տնտեսական ու քաղաքական համերաշխության, միասնության, կոլեկտիվ գիտակցության, փոխադարձ հարգանքի ու վստահության վրա հիմնված կապն է
Էներգետիկ անցում	Գլոբալ Էներգետիկ ոլորտի անցումն է վառելիքային հումքից դեպի վերականգնվող ու մաքուր հումքի, որը նվազեցնում է արտանետումները

Հանրային ծառայությունների մասնավորեցման դեմ պայքարը

Ներդրելով թրեկոյի շարունակում է ուժեղ մնալ...



ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՊԱՄԱՆԱՎՈՐԵՑՈՒՄ/ՀԵՏ-ՎԵՐՑՈՒՄ

924 վերահամայնքայնացում

- Մասնավոր պայմանագրի լուծում / չշարունակում
- Պետության կողմից գնում
- Ինստիտուցիոն / ծառայությունների վերադարձ

ԱՆԳԼԻԱ
94

ՆՈՐՎԵԳԻԱ
18 19

ՖԻՆԼԱՆԴԻԱ
109

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ – ՀԱՄԱՅՆՔ ԳՈՐԾԵՆՎԵՐՈՒԹՅՈՒՆ
Միջ-համայնքային, միջ-կազմակերպական

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՀԱՄԱՅՆՔ ՀԱՄԱԳՈՐԾԱՎՅՈՒԹՅՈՒՆ
Տեղական, շահույթ-չհետապնդող կազմակերպություններ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ՔԱՆԱԲԱՆԱԿ ՀԱՄԱԳՈՐԾԱՎՅՈՒԹՅՈՒՆ
Կոոպերատիվներ, դիվերսիֆիկացված հանրային տնօրինում, համատեղ արտադրություն

484 համայնքային ծառայությունների / հիմնարկների ստեղծում

- Նոր համայնքային հիմնարկի ստեղծում
- Նոր սոցիալական ծրագրերի ստեղծում

ԱՄՆ
141

ԶԻԼԻ
109

ՖԻԼԻՊԻՆԵՆ
21

ՏԵՂԱԿԱՆ ՄԱՎԱՐՈՎԱԿՈՎ ՓՈԳՈՒՄԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԶԱՆԳԱՍԾԸ ՈԳԵՇՆՉՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ՄԱՎԱՐՈՎԱԿՈՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ՏՆՕՐԻՆՈՒՄԸ

Ապագան հանրային է: Ողջ աշխարհով մեկ մարդիկ այսօր հիմնում են ավելի լավ, ավելի ժողովրդավար և ավելի ներառական հանրային ծառայություններ: Բնապահպանական ճգնաժամի, ահազնացող անհավասարության ու քաղաքական անկայունության համատեքստում հանրային ծառայություններն առավել կարևոր դեր ունեն, քան երբևիցե: Տվյալ հետազոտությունը ցույց է տալիս, որ այլընտրանքային աշխարհը հնարավոր է, և մարդիկ արդեն իսկ սկսել են միասին կառուցել հենց այդպիսի աշխարհ:

Ձեզ է ներկայացվում «The Future is Public: Towards Democratic Ownership of Public Services» (Ապագան հանրային է. հանրային ծառայությունների ժողովրդավար սեփականության ճանապարհին) գրքի ամփոփագիրը: Սույն գիրքը հեղինակած բազմաթիվ կազմակերպություններ և աշխատակիցներ դեռ մի քանի տարի առաջ են համախմբել իրենց ուժերը, որպեսզի պայքարեն աշխարհով մեկ ծավալված խմելու ջրի մասնավորեցման ալիքի դեմ և հակազդեն մասնավոր կորպորացիաներին: Մասնավորեցման պայքարը բավականին արագ

վերածվեց գլոբալ շարժման հանուն դրական գաղափարի՝ (վերա)համայնքայնացման: Այս եզրույթը միանգամից նշանակում է թե՛ ծառայության ապամասնավորեցում, և թե՛ նոր հանրային ծառայությունների մշակում, որոնք պետք է օգնեն լուծել մեր օրերի սոցիալական, էկոլոգիական և ժողովրդավարական խնդիրները: Նախկին հրապարակումը՝ 2017թ. Reclaiming Public Services¹ (Հանրային ծառայությունների հետ-վերցնումը) գիրքը պատմում է տարբեր ոլորտներում և աշխարհամասերում (վերա)համայնքայնացման ավելի քան 800 դեպքերի մասին: Եվ նույնիսկ դրա հրատարակման պահին արդեն հայտնի էր, որ դա ընդամենն օվկիանոսում մեկ կաթիլն էր: Սույն զեկույցը հիմնված է մեր նախորդ հետազոտության վրա: Այժմ մենք արդեն նույնականացրել ենք ավելի քան 1400 վերահամայնքայնացման կամ պետականացման դեպքեր 58 երկրի ավելի քան 2400 քաղաքներում: Տվյալների ու դեպքերի քննությունը ի ցույց են դնում (վերա)համայնքայնացմանն ուղղված ջանքերի բազմազանությունը և արդեն ներառում են լրացուցիչ երկրներ ու նոր ոլորտներ՝ իրենց

յուրահատուկ խնդիրներով, ինչպիսին է, օրինակ, աֆրիկյան երկրներում աղբահանության ոլորտը:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ վերահամայնքայնացման դեմ հանդես եկողները չեն պատրաստվում հանձնվել: Մասնավորեցումը շարունակում է կարևոր տեղ զբաղեցնել թե՛ կորպորացիաների ու ֆինանսական շուկաների, և թե՛ միջազգային կառույցների ու երկրների կառավարությունների օրակարգում: Ստեղծվել են բազմաթիվ մասնավորեցման տեսակներ և դրանց համար հորինվել են եզրույթներ, որոնք քողարկում են գործընթացը, մասնավորապես՝ «պետություն-մասնավոր գործընկերություն (ՊՄԳ)», «մասնավոր ֆինանսական նախաձեռնություն», առևտրոսինգ, կորպորատիվացիա, «ընտրության իրավունք», «մրցակցության անհրաժեշտություն» և շուկայի ազատականացում:

Հաշվի առնելով վերահամայնքայնացման դեմ պայքարող հսկայական ուժերը²՝ առավել հատկանշական է, որ այսքան մեծ քանակի ծառայություններ ու հիմնարկներ վերադարձվում են հանրային կառավարման: Սա նշանակում է, որ մարդիկ արժևորում են հանրային ծառայությունների դերը, և ի ցույց է դնում համայնքների, ընտրված ղեկավարների ու արհմիությունների հակվածությունը պաշտպանելու այդ ծառայությունները:



(վերա)համայնքայինացման ոլորտներ

138 Առողջապահություն + Սոցիալական

311
Ձուր



Երկիր	Պայմանական N
Ֆրանսիա	109
ԱՄՆ	71
Իսպանիա	38
Գերմանիա	17
Կանադա	8
Արգենտինա	8
Ֆիլիպիններ	7
Իտալիա	4
Հունգարիա	4
Հարավային	3
Աֆրիկա	3
Մեքսիկա	3
Ղազախստան	3
Ինդոնեզիա	2
Չեռնոսելսկ	2
Վենեսուելա	2
Ուկրաինա	2
Անգոլա	2
Թուրքիա	2
Մոլդովա	2
Մալայզիա	2
Հնդկաստան	2
Բրազիլիա	1
Բոլիվիա	1
Ուզբեկստան	1
Ուրուգվայ	1
Ուգանդա	1
Տանզանիա	1
Եվեդիա	1
Ռուսաստան	1
Պարագվայ	1
Լիբանան	1
Չինաստան	1
Գ. Ա. Հ.	1
Բելգիա	1
Ալբանիա	1

223
ՏԻՄ-եր



Երկիր	Պայմանական N
Բնակարանային	31
Մուտք	28
Կանաչապատում	22
Անվտանգություն և արտակարգ իրավիճակներ	17
Կայանատեղիներ	15
Ծնեքերի մաքրություն և սպասարկում	14
Սպորտ	12
Մշակույթ	9
ՏՏ	7
Շինարարություն	7
Բանտեր	7
Հուշարկավորման և ծառայություններ	4
Մարդկային ռեսուրսներ	3
Այլ	49

374
Էներգիա



Երկիր	Պայմանական N
Գերմանիա	305
Իսպանիա	18
Անգոլա	13
ԱՄՆ	11
Հայաստան	4
Նիդերլանդներ	4
Ավստրալիա	4
Բելգիա	2
Դանիա	2
Ֆրանսիա	2
Հունաստան	2
Հնդկաստան	2
Արգենտինա	2
Բուլղարիա	1
Չինիա	1
Հունգարիա	1
Լիալա	1
Ֆիլիպիններ	1
Ուկրաինա	1

Կրթություն 38

Երկիր	Պայմանական N
Հայաստան	12
Մալայզիա	6
Գերմանիա	5
Անգոլա	4
Ֆիլիպիններ	3
Կանադա	2
Իսպանիա	2
Բրազիլիա	1
Չինի	1
Նիկարագուա	1

192
Հեռահաղորդակցություն



Երկիր	Պայմանական N
ԱՄՆ	19
Գերմանիա	15
Նիդերլանդներ	13
Կանադա	13
Մալայզիա	7

Տրանսպորտ 47

Երկիր	Պայմանական N
Ֆրանսիա	21
Անգոլա	12
Ավստրալիա	3
Նիդերլանդներ	2
Կանադա	2
Պարագվայ	1
Չինիա	1
Բրազիլիա	1
Հնդկաստան	1
Մալայզիա	1
Թուրքիա	1

85
Աղբ



Երկիր	Պայմանական N
Լորվեգիա	19
Անգոլա	15
Դանիա	13
Գերմանիա	13
Կանադա	7
Իսպանիա	6
Եգիպտոս	4
Ֆրանսիա	3
Նիդերլանդներ	3
Պարագվայ	1
Պերու	1

Հետազոտությունը ցույց է տալիս, որ (վերա)համայնքայինացման գործընթացը դեռ բավական ակտիվ է ընթանում այնպիսի ոլորտներում, ինչպիսիք են ջրամատակարարումը և էներգետիկան: Բացահայտվել է նաև, որ սրընթաց վերահամայնքայինացումը և համայնքայինացումը ընթանում են այնպիսի ոչ ակնհայտ ոլորտներում, ինչպիսին են հեռահաղորդակցությունը, որը մեր նախկին հրապարակումից դուրս էր մնացել: Այսօրվա աշխարհում գերաբազ ինտերնետը կենսական անհրաժեշտություն է տնային տնտեսություններում և ձեռնարկություններում: Մենք ի հայտ բերեցինք, որ համայնքային ու տարածքային կառավարությունները փորձում են լուծել թվային անհավասարության խնդիրը՝ մատուցելով արագ լայնաշերտ ինտերնետ ծառայություններ, որպեսզի ապահովվի համայնքների հասանելիությունը, վերակենդանանա տեղական տնտեսությունը փոքր քաղաքներում ու գյուղերում, որտեղ մասնավոր հեռահաղորդակցության ընկերությունները չեն շտապում ներդրումներ կատարել ցածր եկամտաբերության պատճառով: Միացյալ Թագավորությունում Լեյքորիստական

կուսակցությունը նույնիսկ օգտագործել է այս միտումը իր 2019 նախընտրական արշավի մանիֆեստում՝ խոստանալով ազգայնացնել Բրիթիշ Թելեքոմ ընկերությունը և ապահովել բոլորին անվճար ինտերնետով: Սա ապացուցում է, որ նույնիսկ տնտեսության այն ոլորտները, որոնք ավանդաբար համարվել են կորպորատիվ աշխարհի ողնաշարը, կարող են վերափոխվել, որպեսզի մատուցեն համընդհանուր հասանելի հանրային ծառայություններ:

Մինչ այս հրապարակումը պատմում է աշխարհով մեկ (վերա)համայնքայինացման դեպքերի մասին, զուգահեռ շարունակում են տեղի ունենալ մասնավորեցումներ: Բայց այս հետազոտությունը միայն թվերի մասին չէ. այն գլոբալ քաղաքացիական շարժման մասին է: Շատ դեպքերում մասնավորեցումը պետական ու համայնքային իշխանությունների համար հեշտ տարբերակ է՝ այն առաջ է մղվում շուկայում հզոր խաղացողների կողմից, դրան հատկացվում են բավարար միջազգային ֆինանսական միջոցներ՝ համեմված ցանկալի իրավական պայմաններով, այն թույլ է տալիս փոփոխվող քաղաքական գործիչներին ժառանգել դրա հետևանքները

իրենցից հետո ընտրվածներին: Բայց մյուս կողմից, (վերա)համայնքայնացմանը նպաստում է, որ համայնքներն ու համայնքային իշխանությունները հասնեն իրենց սոցիալական ու բնապահպանական նպատակներին, խթանեն տեղական մասնակցային ժողովրդավարությունը, իսկ երկարաժամկետ պարագայում՝ հետ բերեն հանրային ծառայությունների ու տեղական ռեսուրսների ժողովրդավար կառավարումը, բոլորի ընդհանուր ապագան վերցնեն իրենց ձեռքը: Եվ ինչպես ցույց է տալիս այս զեկույցը, համայնքների այսպիսի ձգտումները նույնպես ուժեղ են և 2000-ից 2019թթ. բարեհաջող կերպով հանգեցրել են 924 վերահամայնքայնացման և 484 համայնքայնացման:



(վերա)համայնքայնացման այս ալիքը տեղի է ունենում կրիտիկական պահի: COVID-19 ճգնաժամը հստակորեն ցույց տվեց կոշտ խնայողության քաղաքականության,

սոցապահովության ծրագրերի կրճատման և մասնավորեցված առողջապահական համակարգերի աղետալի հետևանքները: Դրա հետ մեկտեղ՝ ծայրահեղ աջակողմյան քաղաքական շարժումները շարունակում են կապիտալիզացնել մարդկանց վախերն ու զայրույթը՝ օգտագործելով ռասիզմը, ֆաշիզմը և քսենոֆոբիան որպես հասարակության պառակտման միջոց: Առաջադեմ ուժերը պետք է առաջարկեն համերաշխություն և կոնկրետ լուծումներ, ինչպիսին են արժանապատիվ աշխատատեղերը, բոլորի համար գործող հանրային ծառայությունները և դիմակայուն տեղական տնտեսությունը: Համայնքներն ու հանրության ժողովրդավարական կորիզն ուժեղացնելու համար մենք պետք է առաջարկենք կենսունակ հանրային այլընտրանք:



Հանրային ծառայությունների հետ վերցնում (վերա)համայնքայնացում

Վերահամայնքայնացում

Համայնքայնացում



Տվյալներ ըստ երկրների



ԴԱՆԻԱ

ԴԵՊՔԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՆԱԿ

35

Վերահամայնքայնացում 29

Համայնքայնացում 6

Առողջապահություն

8



Աղբահանություն

13



Էներգիա

2



ՏԻՄ

12



Բնակարանների մաքրություն և սպառարկում – 1

Շինարարություն – 1

Մարդկային ռեսուրսներ – 3

Այլ – 1

Նշումներ

- “Ազատ ընտրության քաղաքականության” հետևանքով տարեցների խնամքի հաստատությունների մասնավորեցումը ցույց տվեց իր տնտեսական աննպատակահարմարությունը՝ 2013 թվականից ի վեր գրանցելով 54 սնանկության դեպք:
- Ֆրեդերիկսբերգ վարչական շրջանը (Կոպենհագեն քաղաքում) 2011 թ. սպասվածից ավելի գումար խնայեց, երբ որոշեց կազմակերպել աղբահանությունն իր սեփական աշխատողներով կառավարվող ընկերության միջոցով:
- Համայնքների և հիվանդանոցների կողմից մատուցվող մաքրության ծառայությունների վերահամայնքայնացման և ինտոքսիկի մի քանի դեպք տեղի է ունեցել աշխատանքային ոչ պատշաճ պայմանների պատճառով:

ԻՍՊԱՆԻԱ

ԴԵՊՔԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՆԱԿ

119

Վերահամայնքայնացում 105

Համայնքայնացում 14

Առողջապահություն

14



Աղբահանություն

6



Էներգիա

18



Ջուր

38



Կրթություն

2



ՏԻՄ

41



Բնակարաններ – 2
Մեռնա – 1

Կոնստրուկտոր – 12

Անտոկալանտառելի – 6

Շենքերի մաքրություն և սպառարկում – 10

Մարտա – 2

Մշակույթ – 2

Շինարարություն – 1

Հուշարկավորման ծառայությունների – 2

Այլ – 3

Նշումներ

- (Վերա)համայնքայնացման դեպքերի 2017 թ.-ից սկսած գրեթե կրկնապատկվել են:
- Սոցիալական ու համայնքային հսկայական շարժումը հանգեցրել է 38 ջրամատակարարման համայնքայնացումների:
- Տեղափոխված ջրի համայնքայնացումը ստեղծել է ժողովրդավարական որոշումների ընդունման նոր ձևեր: Քաղաքացիական օգնությամբ քաղաքը հիմնել է Ջրի Դիտորդ հարթակը, որով բնակիչները կարող են մասնակցել հանրային կառավարմանը:
- Վալադոլիդ քաղաքը 2017 թվականին ջուրը համայնքայնացնելուց ի վեր խնայել է €13.3 միլիոն, ինչը կազմում է համայնքային բյուջեի 4% -ը:
- Ընդհանուր առմամբ կառավարության 41 ծառայություն է վերահամայնքայնացվել, ինչպիսիք են դպրոցի ճաշարանները, կանաչ տարածքները, ավտոկայանատեղիները, մաքրության ու հուշարկավորման ծառայությունները:

Վերահամայնքայնացում 34

Համայնքայնացում 17

Տրանսպորտ

2



Աղբահանություն

7



Հեռահաղորդակցություն

3



Առողջապահություն

14



Ջուր

8



Կրթություն

2



ՏԽՄ

15



Բնակարաններ – 1

Մանկո – 1

Անվտանգության տեսչիկներ – 3

Մարզում և մշակույթ – 2

Ֆինանսներ – 6

Այլ – 2

Նշումներ

- Սկսած 2017 թվականից, ավելի քան 20 նոր (վերա)համայնքայնացման դեպք է գրանցվել, ներառյալ՝ ջրամատակարարման, աղբահանության, տրանսպորտի, հեռահաղորդակցության և առողջապահության ոլորտներում:
- 15 վերահամայնքայնացում տեղի է ունեցել մուկիցիպալ ոլորտում, ինչպիսիք են բնակարանային, ավտոկայանատեղիների, ռադիակայան, անվտանգության ոլորտները: Հետաքրքիր համայնքայնացման դեպքերն են շինարարական աղբի (Վինիպեգ, Մանիտոբա) և ջրահեռացման (Տաբեր, Ալբերտա և Օնտարիո Նահանգի Օուեն Սաունդ) դեպքերը:
- Հանրային ծառայությունների հետ վերցնելը հանգեցրել է տնտեսապես արդյունավետ և ավելի որակյալ ծառայությունների:

Վերահամայնքայնացում 1

Համայնքայնացում 15

Առողջապահություն

4



Հեռահաղորդակցություն

1



Կրթություն

6



Տրանսպորտ

1



Ջուր

2



Նշումներ

- 20-ամյա կոնֆլիկտից հետո Սելանգոր Նահանգը վերահամայնքայնացրեց ջրամատակարարման ծառայությունը:
- 2008թ. հիմնվեց Սելանգորի ժողովրդական Խնամքի նախաձեռնությունը՝ որպես սոցիալական միասնական ծրագիր, որը ներառում էր կրթություն, առողջապահություն, բնակարանային տնտեսություն և հանրային սնունդ: Այն միաված էր մատչելի դարձնելու ծառայությունները հատկապես ցածր եկամուտ ունեցող ընտանիքների համար:
- Անվճար ջուրը (ամսական 20 խ.մ. մեկ ընտանիքին), անվճար ավտոբուսներն ու 300 անվճար WiFi կետերը նույնպես ծրագրի մաս են:

ՄԻԱՅՅԱԼ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

ԴԵՊՔԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՆԱԿ

110

Վերահամայնքայնացում 96

Համայնքայնացում 14

Առողջապահություն

9



Աղբահանություն

15



Տրանսպորտ

12



Էներգիա

13



Ջուր

2



Կրթություն

4



ՏԽՄ

55



Բնակարաններ - 18

Մուտք - 3

Գունակություն - 4

Անվտանգություն - 9

Անվտանգություն - 10

Սպորտային և մարզական - 9

Մարզում - 2

Մշակույթ - 1

ԻՏ - 7

Շինարարություն - 3

Մարդկային ռեսուրսներ - 2

Այլ - 3

Նշումներ

- Երկու մասնավոր ֆինանսական նախաձեռնության ընկերություններ սնանկացան 2018 և 2019 թվականներին: (Վերա) համայնքայնացման դեպքերն աճեցին 2017 թ. 64-ից մինչև 2018թ. 108:
- 2008 թվականից բոլոր ոլորտներում և հատկապես համայնքային իշխանություններում գրանցվել է առօրինակների զիջումներ: Ուժեղ թրեյնդ (IT, տնային տնտեսություններ, մանրածախ և սպասարկում)
- Ջրամատակարարման, էներգիայի, երկաթգծերի, փոստի և NHS-ի (ազգային առողջապահական համակարգ) պետականացնելու զարգացող մեծ աջակցություն ունի հանրության շրջանում: Օրինակ, ջրի պետականացման աջակցում է հանրության 83%-ը:
- Վերապետականացումը, ինտերնետը և նոր համայնքային ծառայությունների ստեղծումը սկսում է ժողովրդավարական հանրային սեփականության մասին ազգային պահանջը:

ՆՈՐՎԵԳԻԱ

ԴԵՊՔԵՐԻ
ԸՆԴՀԱՆՈՒՐ
ՔԱՆԱԿ

42

Վերահամայնքայնացում 39

Համայնքայնացում 3

Առողջապահություն

18



Աղբահանություն

19



ՏԽՄ

5



Շենքերի մաքրություն և սպասարկում - 4

Անվտանգություն - 1

Նշումներ

- 2017թ. Ռենոևորդեն աղբահանության ընկերության սնանկացումից հետո ավելի քան 100 համայնքներ հետ վերցրեցին աղբահանությունը:
- Փոքրիկ համայնքների խոշորացումը հնարավորություն տվեց ստեղծել միջ-համայնքային հիմնարկներ, հիմնված սոլիդարության և հանրության կարողությունների զարգացման վրա
- Նշանակալի են նաև խնամքի ծառայությունների և տեղական իշխանությունների ֆունկցիաների վերահամայնքայնացման դեպքերը:
- Վերահամայնքայնացման պրոցեսում կարևոր դեր է ունեցել արհմիությունների ռազմավարությունը:

Վերահամայնքայնացում 2

Համայնքայնացում 42

Առողջապահություն

40



Կրթություն

1



ՏԻՄ

3



Բնակարանների մաքրության և
սպասարկում – 1



Բնակարաններ – 1



Նշումներ

- 2015 և 2018 թվականների միջև 40 նոր հանրային դեղատուն է ստեղծվել, իսկ «Զիլի հանրային դեղատների միությունը» միավորել է այդպիսի դեղատներ ունեցող 80 համայնքներ:
- Առաջինը Ռեկուետա քաղաքի հանրային դեղատուն էր, որի շնորհիվ բնակիչները սկսեցին 70% ավելի քիչ ծախսել դեղորայքների վրա:
- 2018 թ. քաղաքային իշխանությունը հիմնեց Ռեկուետայի Բաց համայնքարանը:
- Այսօր այն առաջարկում է 150 դասընթացներ՝ արվեստի, գիտության, հումանիտար ու սոցիալական գիտությունների ու տեխնոլոգիաների բնագավառում: Ընդհանուր առմամբ 3300 ուսանողներ հաճախել են մեկ կամ ավելի դասընթացների:

Համայնքայնացում 21

Առողջապահություն

4



Կրթություն

3



Էներգիա

1



ՏԻՄ

6



Կանաչապատում – 1



Մանուկ կազմակերպում – 4



Անվտանգության ծառայություններ – 1



Նշումներ

- Ֆիլիպինների համայնքները նոր համայնքային հանրային ծառայություններ են հիմնում բնակչության սոցիալական ապահովություն ուժեղացնելու նպատակով:
- Բինայունան քաղաքը սկսել է արդյունավետ առողջապահական ծառայություններ մատուցել բնակիչներին, ներառյալ խնամքի ծառայություններ և առողջապահական ծախսերը հոգալու համար ֆինանսական ծառայություններ: Արդյունքում, քաղաքում երեխաների թերսնման դեպքերը նվազել են 17%-ով, իսկ հակաբեղմնավորիչների օգտագործումն ավելացել է 51%-ով:
- Կախտա Ռիզալ համայնքը 2016 թ. հիմնել է “Մեկ Կախտա” ծրագիրը, որն ապահովում է բնակիչներին անվճար կրթությամբ համայնքային քոլեջի միջոցով, որը տարեկան 800 ուսանող է ընդունում: Բացի այդ, ծրագիրը ներառում է առողջապահական հաստատություններ, մատչելիություն դեպի բժշկական ծառայություններ խոցելի խմբերի համար:
- Ֆիլիպինների համայնքները կարևոր դեր են խաղում երկրի կլիմայական դիմակայության համար՝ օգտագործելով գյուղատնտեսական և ձկնորսական, բնապահպանական և էներգիայի արտադրության ինտեգրված մոտեցումներ (Դել Կարմեն և Լանուզա):



Հիմնական արդյունքներ

1. Վերահամայնքայնացումն ու համայնքայնացումը վերափոխում են հանրային սեփականությունը

Հետազոտության հիմնական շեշտը դրվում է այն բանի վրա, թե ինչպես են (վերա)համայնքայնացումն ու համայնքայնացումը հանրային ծառայությունների տնօրինումը դարձնում 21-րդ դարին համահունչ՝ հիմնվելով մասնակցային և ժողովրդավար սեփականության գաղափարի վրա: Օր օրի համալրվում է այն «կանաչ» համայնքների շարքը, որոնք բնապահպանական ճգնաժամերին ու խորացող անհավասարություններին տալիս են (վերա)համայնքայնացում պարունակող լուծումներ: Զաղաքներն այն իդեալական միջավայրն են, որտեղ կարելի փորձարկել ուղիղ ժողովրդավարությունը, ինչպես նաև առաջ տանել այնպիսի առաջատար տնտեսական մոդելներ, որոնք ստեղծում են համայնքային


բարեկեցություն և արժանապատիվ աշխատանք: Վերահամայնքայնացման շարժառիթները կարող են տարբեր լինել, բայց ավելի հաճախ դրա հիմքում ընկած է լինում ձախողված մասնավորեցումը: Եվ սա է նաև այս հետազոտման բացահայտումների հիմնական գաղափարը: Վերահամայնքայնացումից ստացված ամենաուղղակի դրական հետևանքը հանրային ծառայությունների ինքնարժեքի նվազումն է՝ այն կամ արդեն տեղի է ունեցել, կամ սպասվում է ընդհանուր առմամբ 245 դեպքում: Որոշ դեպքերում, ինքնարժեքի նվազումը նշանակում է նաև օգտվողների համար այդ ծառայությունների սակագնի նվազում, ինչը տեղի է ունեցել հետազոտված 188 դեպքում: Առնվազն 264 դեպքում տեղի են ունեցել ներդրումներ՝ ծառայությունների որակի բարելավման և շրջակա միջավայրի պահպանման ուղղություններով:

Աշխատողները, որոնք մատուցում են հանրային ծառայությունները, այդ ծառայությունների հիմնասյունն են և նրանց աշխատանքային իրավունքները անխուսափելիորեն ազդում են ծառայությունների

որակի վրա: (Վերա)համայնքայնացման գործընթացների ընթացքում փոփոխվել են նաև աշխատանքային պայմանները: 158 դեպքում բարելավվել և կատարելագործվել աշխատողների իրավունքներն ու պայմանները, մասնավորապես խոցելի խմբի աշխատողների դեպքում: Ընդ որում, այս գործընթացներին արհմիությունների մասնակցությունը արդյունքներին հասնելու համար կարևորագույն նշանակություն ուներ:

Հանուն ապագա սերունդների, մեր համընդհանուր պարտականությունն է մշակել ամբողջական կլիմայական ու էներգետիկ քաղաքականություն, որը կնպաստի ածխածնային արտանետումների նվազեցմանը: Ապամասնավորեցման դեպքերից շատերը դրական ազդեցություն են ունեցել տեղեկան տնտեսությունների վրա՝ ստեղծելով կայուն զբաղվածություն և ներգրավելով նոր բիզնեսներ և հետազոտական կենտրոններ:

Բնապահպանական կայունությունը և սոցիալական առաջխաղացումը նույնպես հիմնարար դեր ունի համընդհանուր համայնքային հարստություն կառուցելու գործընթացում (ինչպես ցույց են տվել հետազոտված դեպքերից 297-ը), իսկ համայնքների հետքայլը մասնավորեցման գաղափարից առնվազն 119 դեպքում նպաստել է շրջակա միջավայրի հետ կապված բարեփոխումների: 209 դեպքերում հստակ նկատվել են կոորդինացված ջանքեր՝ ուղղված բնապահպանական խնդիրների լուծմանը էներգետիկայի, աղբահանության, բնակարանային, ջրամատակարարման, սննդի և տրանսպորտի ոլորտներում: Առաջադեմ քաղաքները ու համայնքային հիմնարկները ռազմավարական ներդրումներ են անում շրջակա միջավայրի պահպանության երկարատև ծրագրերում, ինչը ցույց է տալիս այդպիսի ընկերությունների նշանակությունը հանրության կյանքում:



Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բոլոր 1400 դեպքերում հանրային խաղացողները ծառայությունը հանրության ձեռքը վերադարձնելուն պես այս կամ այն կերպով (վերա)փոխել են դրանց արժեքները՝ հանրության և մոլորակի շահին ծառայելու համար: Հանրային ծառայությունները հետ վերցնելու ու վերակառուցելու այս նախապայմանները միասին կազմում են 21-րդ դարում հանրային սեփականության եռությունը, և այս թրեմը պետք է շարունակական լինի: Հետազոտության մեջ մենք հարցադրում ենք արել՝ արդյոք (վերա)համայնքայնացումը հանգեցնում է հանրային ծառայության ավելի ժողովրդավար կառավարման:

Պատասխանը բավականին հուսադրող էր՝ առնվազն 149 դեպքում մեզ հաջողվեց գտնել ժողովրդավար տնօրինման կամ դրա բարելավման ուղղված մեխանիզմների կոնկրետ միջոցառումներ: Միջոցառումները ներառում էին հաշվետվողականություն, թափանցիկություն և կառավարման գործընթացների մասին տեղեկատվության հրապարակում:

2. Վերահամայնքայնացումը նվազեցնում է հանրային ծառայությունների արժեքը

Չնայած արժեքը չէ այն հիմնական շարժառիթը, որի հիման վրա որոշում է կայացվում վերահամայնքայնացնել հանրային ծառայությունը, այն, այնուամենայնիվ, բավարար կարևոր պարամետր է: Հանրային ծառայություններն ապահովում են լավագույն գին/որակ հարաբերակցությունը, չնայած այն նեղիքերալ գաղափարին, իբր մասնավորեցումը, պետություն-մասնավոր գործընկերությունը և առևտրոսինգը թեթևացնում են բյուջետային ծախսերը: 2014 թվականին Կանադայի Օնտարիո քաղաքում գտնվող Auditor General աուդիտորական կազմակերպությունը կատարել է թվով 74 պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) պրոյեկտների հետազոտություն՝ եզրահանգելով, որ դրանք հանրության համար արժեքել են 8 միլիարդ կանադական դոլարով ավել, քան այն դեպքում, եթե Օնտարիո նահանգը փոխարենը կատարեր հանրային գնումներ: Նույն կերպ, Կանադայի Բրիթիշ Էլլավերիայում նահանգային աուդիտորը եկել է եզրահանգման, որ 2014 թվականի ընթացքում 16 ՊՄԳ-ների դեպքում նահանգը

կրկնակի անգամ ավելի միջոցներ է ծախսել մասնավոր ոլորտի վրա, քան եթե ծառայությունն ապահովեր սեփական միջոցներով³: Միացյալ Թագավորությունում Ազգային աուդիտորական գրասենյակի 2018թ. զեկույցի համաձայն մասնավորի կողմից հանրային ծառայությունների ֆինանսավորումը կարող է մոտ 40% ավելի արժենալ՝ ի տարբերություն այն դեպքի, երբ համայնքն օգտագործում է հանրային ֆինանսներ⁴: Մեկ այլ զեկույցում, Միացյալ Թագավորության գանձապետական ծառայությունը հայտնաբերել է, որ մասնավոր հիվանդանոցը կարժենա 70%-ով ավելի, քան համայնքայինը կամ պետականը⁵:

Գոյություն ունի հինգ հիմնական պատճառ, թե ինչու մասնավոր ծառայություններն ավելի թանկ են, քան համայնքայինները.

1. Մասնավոր կորպորացիաները պարտավոր են ապահովել շահույթ, ինչպես նաև տոկոսներ վճարել իր բաժնետերերին

2. Մասնավորեցումը հանգեցնում է լրացուցիչ բարդությունների ու ծախսերի, ինչպիսիք են պայմանագրեր կազմող խորհրդատվական ու իրավաբանական ընկերություններին ծառայությունների դիմաց վճարումը

3. Համայնքային ու պետական իշխանությունները կորցնում են հսկողությունը ծառայության նկատմամբ, քանի որ մասնավոր ընկերությունները սկսում են ծառայությունների որոշակի հատվածներ ենթարկել առևտրոսինգի՝ դրանք տալով այլ ընկերությունների

4. Մասնավոր ընկերությունները հիմնականում չունեն ֆինանսական կառավարման երկարաժամկետ ռազմավարություն

5. Մասնավոր ոլորտում ֆինանսական միջոցներ ներգրավելու համար բանկերի վարկային տոկոսադրույքներն ավելի բարձր են, քան երբ ներգրավվում են հանրային միջոցներ

Վերահամայնքայնացումների առանձին դեպքերի քննությունը մեզ օգնում է կառուցել հավաքական դեպք՝ ցուցադրելով, որ հանրությանը պատկանող և դրա կողմից կառավարվող ծառայություններն ավելի լավ տնտեսական իմաստ են ապահովում աշխատողների համար: Ինչպես արդեն նշեցինք, առնվազն 245 դեպքերում մենք տեսնում ենք, թե

ինչպես է (վերա)համայնքայնացումը հանգեցրել ծախսերի կրճատման, իսկ 246 դեպքերում համայնքային ընկերությունները հաջողացրել են կատարել ներդրումներ ենթակառուցվածքների և ծառայությունների բարելավման համար: Երբ ծառայությունները վերադառնում են հանրությանը, այն հարկերն ու շրջանառությունը, որոնք գոյանում են ծառայությունների համար ստացվող վճարներից, հնարավորություն է լինում նորից ներդնել ծառայությունների բարելավման ու դրանց կենսակայունությունն ապահովելու մեջ:

բարելավման վրա, ինչն էլ իր հերթին օգնում է կայունացնել սպառողներից գանձվող սակագների չափը: Մնացած շահույթն օգտագործվում է համայնքային հարստությունն ստեղծելու վրա, քանի որ ներդրվում է ֆոտովոլտայիկ պանելների մեջ, որոնք, հավանաբար, շուտով կօգնեն նվազեցնել էլեկտրականության արտադրման ծախսը:

3. Հանրային ծառայությունների մասնավոր կառավարումն ու սեփականությունը սնանկության ռիսկեր է պարունակում

Վերահամայնքայնացման մասին պատմությունները հիմնականում պատմում են քաղաքացիների, աշխատողների և քաղաքական գործիչների մասին, որոնք հասնում են իրենց առջև դրված սոցիալական և բնապահպանական նպատակներին՝ հետ վերադարձնելով ծառայությունների ժողովրդավար տնօրինումը: Բայց հազվադեպ չեն նաև դեպքերը, որ մասնավորեցումը պարզապես ձախողվել է: Ուսումնասիրությունը կատարելու ընթացքում մենք հայտնաբերել ենք առնվազն 27 դեպք, երբ ծառայությունների մասնավոր օպերատորները սնանկ են ճանաչվել: 2018թ. Միացյալ Թագավորությունում փլուզվեց Քերիլինը՝ մասնավորեցված ենթակառուցվածքների և աուքսորսինգային պայմանագրերի մասնագիտացված ընկերությունը՝ վտանգի տակ դնելով 420 մասնավոր ֆինանսական պրոյեկտներ և 18000 աշխատողների ապագան: Դանիայում, որտեղ, այսպես կոչված, «ազատ ընտրության» քաղաքականության պատճառով տարեցների խնամքի հաստատությունների միջև պարտադիր մրցակցության պայման ներդրվեց, փլուզվեցին մեծ թվով այդպիսի մասնավոր հաստատություններ: Նորվեգիայում ՌենոՆորդեն աղբահանության ընկերության սնանկության պատճառով կարող էր վնաս հասցվել ավելի քան 137 համայնքների, եթե արհմիությունները նման զարգացումը չկանխատեսեին և չսկսեին աշխատել համայնքների հետ՝ (վերա)համայնքայնացման գործընթացն ապահովելու համար:

Սնանկացումներն ու կորպորատիվ փլուզումները բացահայտում են մասնավորեցման արդյունավետության ու նորարարության մասին արձածվող ֆեյք թեզի տակ թաքնված իրականությունը՝ շատ մասնավորեցված

Դեպքի քննություն N1. Քաղաք Վալյադոլիդ, Իսպանիա – ջրամատակարարման համակարգ

2016թ. Վալյադոլիդ քաղաքի ավագանին որոշում կայացրեց վերահամայնքայնացնել քաղաքի ջրամատակարարման ծառայությունը, քանի որ մասնավոր ընկերության հետ կնքված պայմանագրի ժամկետը մոտենում էր իր ավարտին: Վերջին 20 տարվա ընթացքում մասնավոր ընկերությունը բարձրացրել էր ջրամատակարարման սակագինը 37.28 տոկոսով: Դրա հետևանքով խմելու ջուրը աղքատ ընտանիքների համար գրեթե ճոխության էր վերածվել, մանավանդ 2008-ի տնտեսական ճգնաժամից հետո: Բացի այդ, շահույթի հետևից ընկնելով, ջրամատակարարման համակարգում մասնավոր ընկերությունը գրեթե ներդրումներ չէր կատարել:

2015թ. ՏԻՄ ընտրություններում նոր համայնքային իշխանություն ձևավորվեց, որով հնարավորություն ստեղծվեց խզել Վալյադոլիդ քաղաքի մասնավոր ջրամատակարարման պայմանագիրը: 2016թ. դեկտեմբերին քաղաքի ավագանու անդամների գերակշիռ մեծամասնությունը հավանություն տվեց (վերա)համայնքայնացմանը և ստեղծեց համայնքին պատկանող նոր Aquavall ընկերությունը, որն աշխատանքի ընդունեց մասնավոր ընկերության ողջ աշխատուժը: Երկու տարվա գործունեությունից հետո, Aquavall հիմնարկն արդեն իսկ խնայել էր 13.3 միլիոն եվրո գումար, ինչը իր 2018թ. բյուջեի 4% է կազմում (€337.2 միլիոն)⁶: Մինչև այսօր համայնքային հիմնարկի շրջանառությունը կազմել է €26.4 միլիոն: Շահույթի մեծ մասն այժմ օգտագործվում է կոյուղու և ջրամատակարարման ցանցի

ծառայություններ իրականում տնտեսապես պիտանի չեն: Առաջնություններ (պատվիրակման) պայմանագրերն ու պետություն-մասնավոր գործընկերություններ իրականում միտված են առաջնահերթություն տալ շահույթին և դիվիդենդներին, այլ ոչ թե ծառայությունների որակին: Հենց որ շահույթներն այլևս չեն բավարարում կամ ծառայությունը դադարում է նյութական օգուտներ բերել, կորպորացիաներն ու ներդրողները միանգամից «վանում են» ձեռքերը՝ քելով ծառայությունները, աշխատողներին, ինչպես նաև մարդկանց, որոնք ապավինում էին այդ ծառայություններին: Մասնավորեցման տնտեսական ձախողումների մեկ այլ ակնառու ապացույցն է, որ մասնավոր օպերատորները հիմնականում չեն ցանկանում մատուցել ծառայություններ այնպիսի տարածաշրջաններում, որտեղ բնակչությունից ստացվող շահույթն իրենց բավարար չի լինելու, կամ որտեղ ծառայությունների համար օգտվողներն ի գործ չեն ավելի շատ վճարել, կամ էլ՝ որտեղ ծառայության ինքնարժեքն ավելի բարձր է լինելու: Օրինակ, ԱՄՆ խոշոր հեռահաղորդակցության ընկերությունները հետաքրքրված չեն ծառայություններ մատուցել հեռավոր գյուղական բնակավայրերում, փոքրիկ քաղաքներում, ինչպես նաև ցածր եկամուտներ ունեցող համայնքներում: Այս դեպքերում, տեղական ինքնակառավարման մարմիններն ու համայնքային ուժերով ստեղծված ընկերությունները գալիս են լրացնելու բացը՝ զարգացնելով արագ ինտերնետ ապահովող ենթակառուցվածքներ բազմաթիվ այն համայնքներում, ուր խոշոր ընկերություններն այդպես էլ չեն եկել:

Աֆրիկայի երկրների մեծ մասում աղբահանության մասնավոր ընկերությունները ծառայությունը մատուցում են միայն խոշոր քաղաքների հարուստ թաղամասերում՝ այդպիսով բնակչության հիմնական մասը դուրս թողնելով սպասարկման ծածկույթից: Օրինակ՝ Տանզանիայի Դար Էս Սալամ քաղաքում աղբահանության մասնավորեցումը հանգեցրել է անհավասար պայմանների՝ քաղաքի հարուստ շրջանները ստանում են բարձրորակ սպասարկում, իսկ ավելի աղքատ թաղամասերն անտեսվում են: Այդպիսով, Դար Էս Սալամ քաղաքի աղբի մոտ 70 տոկոսը տարհանվում է ոչ պաշտոնական մեթոդներով՝ այրվում է, թափվում է գետերի մեջ, կամ էլ գոյանում են չնախատեսված աղբավայրեր⁷:

Դեպքի քննություն N2. Քաղաք Կրագերյո, Նորվեգիա – Աղբահանություն

Կրագերյո քաղաքում «ՌենոՆորդեն» աղբահանության մասնավոր ընկերության աշխատողներն ու աշխատողների խորհուրդը 2017թ. ահագանգեց համայնքային իշխանությանն այն մասին, որ հիմնարկն այլևս չի կարողանում կատարել իր պարտականությունները: Մանրամասն ուսումնասիրություններից հետո համայնքը որոշում կայացրեց հետ վերադարձնել ծառայությունը մասնավորից: Նրանց հաջողվեց խզել RenoNorden-ի հետ պայմանագիրը և պահպանել աշխատատեղերը՝ նախքան ընկերությունը կճանաչվեր սնանկ: Վերահամայնքայնացման արդյունքում աղբահանության վճարը քաղաքի բնակիչների համար նվազեց 14 տոկոսով, իսկ աշխատավարձերն ու սոցիալական երաշխիքները բարձրացան: Համայնքն այսօր կարողանում է գումարներ խնայել՝ խուսափելով թանկարժեք գնումների ընթացակարգերից, իսկ աշխատողների թվի բարձրացումը հնարավորություն է տվել համագործակցել նաև այլ մոնիցինգայլ ծառայությունների հետ:

Ավելացված աշխատավարձերից բացի, ՌենոՆորդենի նախկին աշխատողները նաև այլ բարելավումների մասին են նշում: Օրինակ՝ քաղաքապետարանն աջակցում է ֆորմալ կրթություն չունեցող աշխատողներին՝ տրամադրելով նրանց ուսուցում, որպեսզի նրանք կարողանան ձեռք բերել դիպլոմներ և ունենալ անժամկետ, լրիվ դրույթով աշխատանքային պայմանագրեր⁸:

Դեպքի քննություն N3. Դանիայի հարավային տարածք – շտապ օգնության ծառայություններ

Մինչև 2016 թվականը Դանիայի հարավային տարածքում շտապ օգնությանը պատվիրակված էր մասնավոր ծառայություններին: Այնուամենայնիվ, վերջին պայմանագրային գործընթացից հետո, BIOS շտապ օգնության ծառայությունը ոչ միայն չկարողացավ աշխատանքի ընդունել բավարար քանակով վարորդներ, բայց նաև չկարողացավ փոխհատուցել տարածքային կառավարման մարմնի կողմից պատահմամբ կրկնակի կատարված վճարները: Արդյունքում, 2016 թ.

հովիսին BIOS-ը մնանկ ճանաչվեց: Մարգարետարանն օգտվեց հնարավորությունից և վերահամայնքայնացրեց ծառայությունը՝ աշխատանքի վերցնելով 657 BIOS-ի աշխատողների, ինչպես նաև լրացուցիչ 100 տեխնիկական աշխատողների: Ի տարբերություն BIOS-ից առաջ գործող FALCK ընկերության, Դանիայի մարզը կարողացավ նվազեցնել շտապ օգնության ծառայությունների արժեքը 15 տոկոսով՝ միաժամանակ բարելավելով ծառայությունների որակը լրացուցիչ աշխատողներ հավաքագրելու միջոցով: Դրանից հետո Հարավային մարզի քաղաքական մեծամասնությունն կազմող ուժը որոշեց այլևս չթողնել մասնավոր ընկերություններին Հարավային Յուտլանդու և Ֆունեն կղզիներում շտապ օգնության ծառայություն մատուցել⁹:

մարդու և սոցիալական իրավունքները, ինչպես նաև այդ նպատակներին հասնելու հստակ միջոցները: Որպես օրինակ կարելի է մատնանշել Փարիզի ջրամատակարարման Eau de Paris համայնքային հիմնարկը, որը ստեղծվել է 2010 թվականին՝ վերջ դնելով դեռ 80-ականների կեսերից սկսված մասնավորեցումը: Հիմնարկի առաքելությունը միայն խողովակների մեջ չէ. ընկերության նպատակներում նշված է, որ այն պարտավորվում է ապահովել ջուր ունենալու մարդու իրավունքը Փարիզի բոլոր բնակիչների համար՝ անկախ նրանց իրավական կարգավիճակից: Eau de Paris-ը գործարկում է քաղաքի պուլպուլակների ու շատրվանների ցանցը՝ ապահովելով ջրի հասանելիությունն ինչպես ամենախոցելի բնակչության համար: Սա նաև հիմնարար ծառայություն է քաղաք ժամանող փախստականների, ինչպես նաև կեցավայր չունեցող մարդկանց համար¹¹:

4. (Վերա)համայնքայնացումն օգնում է պաշտպանել և առաջխաղացնել մարդու և սոցիալական իրավունքները

2018թ.-ին ՄԱԿ-ի ծայրահեղ աղքատության և մարդու իրավունքների գծով Հատուկ Չեկուցողը¹⁰ հայտարարեց, որ հանրային ծառայությունների և ենթակառուցվածքների համատարած մասնավորեցումը համակարգորեն վերացնում է մարդու իրավունքի պաշտպանության մեխանիզմները և ավելի է մարզինալիզացնում աղքատության մեջ գտնվող մարդկանց: Իր զեկույցում ուսումնասիրվում էր մասնավորեցման ազդեցությունը մարդու իրավունքների վրա քրեակատարողական համակարգի, սոցիալական ծառայությունների, ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրականության, առողջապահության, տրանսպորտի և կրթության ոլորտներում: Հատուկ զեկուցող Ֆիլիպ Ալստոնը քննադատում է, որ մասնավորեցման պայմանագրերի մեծ մասում բացակայում են մարդու իրավունքների հետ կապված ստանդարտները. այդպիսի պայմանագրերը չունեն նաև աղքատ մարդկանց հետ կապված մոնիտորինգ:

(Վերա)համայնքայնացումը մարդու իրավունքների այսպիսի քայքայման հակամարմին է: Մեր հետազոտության մեջ բացահայտվեց 138 դեպք, որտեղ (վերա)համայնքայնացման քաղաքական նպատակների մեջ հստակ ամրագրված էին

Դեպքի քննություն N4. Սելանգոր նահանգ, Մալայզիա – առողջապահություն և սոցիալական խնամք

2008թ. կառավարության փոփոխությունից հետո, Մալայզիայի Սելանգոր նահանգը գործարկեց միասնական սոցիալական պաշտպանության ծրագիր՝ Inisiatif Peduli Rakyat («Բնակչության խնամքի նախաձեռնություն»): Պետական եկամուտներով ֆինանսավորվող ծրագիրը նպատակ ուներ բարելավել տարբեր խոցելի խմբերի սոցիալական պաշտպանությունը՝ կրթության, սոցիալական խնամքի, տրանսպորտի, ջրամատակարարման, բնակարանային ու մենդի ոլորտներում: Սոցիալական խնամքի բարելավումը հատուկ տեղ է զբաղեցնում ծրագրում. մասնավորապես, սկսած 2008 թ.-ից Skim Mesra Usia Emas («Ոսկե տարիքի ուղեկից») աջակցության մեխանիզմով տարիքով անձանց վճարվում է 2500 Մալայզիական ռինգիտ (€538) թաղման նպաստ, որպեսզի այդ գումարով անձանց բարեկամները կարողանան հոգալ հուղարկավորության ծախսերն անձի մահվանից հետո: 2010թ. մեկնարկած մեկ այլ՝ կանանց առողջության աջակցության ծրագրով 35 տարեկանից բարձր կանանց համար վճարվում է մամոգրաֆիայի գումար: 2017թ. դրան գումարվեց նաև ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար աջակցության ծրագիրը, որով այդպիսի ընտանիքներին տրամադրվում է տարեկան 500

դինգիտ (€108)՝ բժշկական ծառայությունների համար¹²:

Դեպքի քննություն N5. Բեռլին, Գերմանիա – Բնակարանային ոլորտ

Վերջին հինգ տարում Գերմանիայի մայրաքաղաք Բեռլինում կրկնակի անգամ աճել է բնակարանների վարձակալությունը¹³: Պատասխանելով բնակիչների դժգոհությանը՝ քաղաքային իշխանությունները որոշակի միջոցներ են ձեռնարկել՝ վարձակալման շուկան կարգավորելու նպատակով, ինչպիսիք են մասնավորից բնակարանների գնումը համայնքի կողմից և վարձակալության գների սառեցումը: Օրինակ՝ Ֆրիդրիխսգայն-Քոյոցբերգ վարչական շրջանի սենատը (ավագանին), ընդառաջ գնալով բնակիչների պահանջին, կասեցրել է Դոյչե Վոնեն անշարժ գույքի գործակալության կողմից 675 բնակարանների ձեռք բերման գործընթացը: Բնակիչները կարծում էին, որ այդպիսի մեծածախ գնումը բերելու է այդ բնակարանների վարձակալության մենաշնորհի և վարձավճարի թանկացման¹⁴:

Բեռլինի քաղաքապետարանը դիմել էր վարչական դատարան՝ կասեցնելու անշարժ գույքի գործակալությունների կողմից բնակարանների մասսայական գնումը, բայց դատարանի կողմից 2018թ.-ին հայցը մերժվել էր: Դրա հետևանքով Բեռլինի ավագանին որոշեց շրջանցել օրինական սահմանափակումները՝ օգտագործելով վարձակալներին և նրանց իրավունքները՝ որպես միջնորդ օղակ: Որոշվեց, որ վարձակալները կգնեն այն բնակարանները, որոնցում բնակվում են և կվաճառեն դրանք քաղաքային «Բեռլինի բնակարանային միությանը»: 2019թ.-ի վերջին Բնակարանային միությունն այդպիսի մեթոդով գնել էր արդեն 6000 բնակարաններ Շպանդաու և Ղայնիքենդորֆ¹⁵ վարչական շրջաններում՝ փաստորեն իրագործելով Գերմանիայի պատմության մեջ ամենախոշոր վերահամայնքայնացումը: 2019 թվականին Բեռլինի համայնքն ընդունեց օրենք՝ որով վարձակալության վճարները մոտակա հինգ տարիների համար սառեցվում են 2019թ. հուլիս ամսվա վարձակալության գների մակարդակում, ինչպես նաև սահմանեց վարձակալության մաքսիմալ թույլատրելի շեմ¹⁶:

Այս փոփոխություններից շահում են Բեռլինի

մոտ 1.5 միլիոն բնակարաններ: Համայնքի գործողություններին զուգահեռ աճում է նաև հզոր քաղաքացիական շարժում. բնակիչները պահանջում են անցկացնել հանրաքվե՝ Դոյչե Վոնեն և այլ խոշոր գործակալություններին պատկանող շուրջ 240 000 բնակարանները էքսպրոպրիացնելու հարցով:

5. (Վերա)համայնքայնացումը վերականգնում է անորոշ աշխատանքը

Մասնավորեցումը, աուբսորսինգը, պետություն-մասնավոր գործընկերությունը, խնայողության քաղականությունը հաճախ արդարացվում են նրանով, որ մասնավոր ոլորտն ավելի արդյունավետ է և որ պետական միջոցների խնայողության կարիք կա: Իրականում, սակայն, եթե նույնիսկ մասնավոր օպերատորները նվազեցնում են ծախսերը, դա տեղի է ունենում հանրային ծառայությունների աշխատողների հաշվին: Կրճատելով աշխատատեղերը, վատթարացնելով աշխատանքային պայմանները, անտեսելով կոլեկտիվ բանակցությունները՝ մասնավոր ընկերությունները դառնում են անորոշ աշխատանքի հզոր շարժիչ ուժ: Եվ սա ոչ միայն աշխատողների, իրենց ընտանիքների ու համայնքների խնդիրն է, այլ նաև նրանց, ովքեր օգտվում են տվյալ ծառայություններից, քանի որ տուժում է վերջիններիս որակն ու մատչելիությունը:

Ի տարբերություն մասնավոր ոլորտի՝ շատ են համայնքային ծառայությունների դեպքերը, երբ քաղաքային իշխանությունները կարողացել են խնայել միջոցներ՝ միևնույն ժամանակ բարելավելով աշխատանքային իրավունքները ու վարձատրությունը: Սկսած 2011 թվականից Լոնդոնի Իսլինգտոն շրջանի ավագանին հետ է վերցրել մաքրության, ճանապարհաշինության և աղբահանության պայմանագրեր ընդհանուր առմամբ £380 միլիոն արժողությամբ: Դա նշանանակում է մոտ 1200 ծառայողների համար բարելավված աշխատանքային պայմաններ, իսկ համայնքի համար՝ մոտ £14 միլիոն խնայված միջոցներ¹⁷: Նորվեգիայի Կրագերյո քաղաքում աղբահանության ծառայության հետ վերցնելը հանգեցրեց սակագների 14 տոկոս նվազման, իսկ աշխատողների համար բարձրացավ աշխատավարձն ու կենսաթոշակները:

Այս գեկույցում առնվազն 158 վերահամայնքայնացման և համայնքայնացման

դեպքերը նպատակ ունեն բարելավել կամ արդեն իսկ բարելավել են աշխատողների աշխատանքային պայմանները: Բարելավումները ներառում են վարձատրությունը, աշխատավայրում առողջությունն ու անվտանգությունը, միավորման ազատությունը, կոլեկտիվ բանակցությունը, խոսքի ազատությունը և աշխատողների մասնակցությունը որոշումների ընդունման գործընթացում: Այս դեպքերի քննությունը ցույց է տալիս, որ բարձր որակի զբաղվածության և բարելավված աշխատանքային պայմանների ապահովումը, աշխատողների փորձին ու գիտելիքին հարգանքով վերաբերվելը մատչելի ու տնտեսապես արդյունավետ հանրային ծառայություններ ունենալու համար անհրաժեշտ պայմաններ են: Պատահական չէ, որ աշխատողներն ու իրենց արհմիություններն են առավել հաճախ լինում վերահամայնքայնացման առաջնագծում:

դեկավարման ծախսերն ու կապալառու ընկերություններին ծառայություններ պատվիրելու ընթացքում վճարվող ԱՎՀ-ն¹⁸:

6. (Վերա)համայնքայնացումը կարող է բարելավել հանրային առողջությունն ու նվազեցնել վնասները

Առողջապահության համակարգը գտնվում է մասնավորեցման հսկայական բեռի տակ, ինչպիսիք են աուստրաիկացի և ամենաեժան արժեքի մեթոդով անցկացվող տեսիլները: Շուկայի ազատականացումից, որին հիմնավորապես նպաստել են ներդրումային ու միջազգային առևտրային պայմանագրերը, օգտվում են շահույթ հետապնդող ընկերությունները:

Բայց պարզ է, որ (վերա)համայնքայնացումը և ծառայությունների հետ վերցնելը դրական են ազդում հանրային առողջության վրա, մասնավոր՝ առավելապես խոցելի ընտանիքների համար: Այս հետազոտման արդյունքներից որպես օրինակ կարելի է բերել Ֆինլանդիայի Յելսինկի քաղաքի հիվանդանոցային համալիրը, ինչպես նաև Չիլիի քաղաքներում ստեղծված ավելի քան 40 մոնիցինգայլ դեղատները: Այս օրինակներն ի ցույց են դնում, թե ինչպես են իշխանությունները պարտավորություն վերցնում պաշտպանել հանրային առողջությունը՝ ուղիղ ներդրումներ կատարելով մատուցվող ծառայությունների մեջ:

Մեր գեկույցում տեղ են գտել առնվազն 142 դեպքեր, որոնք միտված են զարգացնելու կամ արդեն զարգացրել են հանրային առողջությունը, բայց նաև համաճարակաբանական և վերականգնողական ոլորտը: Ռեաբիլիտացիոն ոլորտի ծառայությունները, որոնք ընդգրկում են առողջական և սոցիալական քաղաքականությունների ու ծառայությունների լայն շրջանակ, հաճախ անտեսվում են, չնայած առողջապահության համակարգի կարևորագույն մասն են կազմում: Այսպիսի ծառայությունները նվազեցնում են թմրանյութերից կախվածություն ունեցող մարդկանց հանրային ստիգման և ֆիզիկական հետևանքները. քրեականացվելու փոխարեն նրանք հատուկ աջակցություն և վերականգնողական ծառայություններ են ստանում:

Եվրոպայի, Կանադայի, Բրազիլիայի ու Ավստրալիայի 29 քաղաքներում ստեղծվել են

Դեպքի քննություն N6. Սեուլ, Հարավային Կորեա – քաղաքային տրանսպորտի մաքրություն

Նախկին քաղաքապետ Պակ Վոն-սունի դեկավարման օրոք 10 միլիոնանոց մայրաքաղաքում ընթացել են աշխատանքային քաղաքականության հսկայական բարեփոխումներ: 2013-ից 2017 թվականը քաղաքը կարգավորել է 7296 հանրային ծառայողների զբաղվածության կարգավիճակը, որոնցից 70 տոկոսը մաքրողներ են: Նրանցից շատերն այսօր աշխատում են երկու նոր համայնքային ընկերություններում՝ Սեուլ Մետրո Ինվայրմենթ և Սեուլ Ուրբան Ռեյլ Գրին Ինվայրմենթ: Ընկերությունները զբաղվում են հանրային տրանսպորտի, մետրոյի և երկաթուղու մաքրությունն ապահովելով: Նախկինում աշխատողների գործատուներն էին մասնավոր կապալառու ընկերությունները, որոնք հրաժարվում էին տրամադրել աշխատողների սոցիալական ու բժշկական երաշխիքներ, ինչպես նաև պատշաճ կերպով վարձատրել: Հանրային դառնալուց հետո նրանց աշխատավարձը աճել է 7.3 տոկոսով, իսկ սոցիալական երաշխիքները ստանդարտացվել են: Չնայած աշխատուժի թանկացմանը, քաղաքի բյուջետային կատարողականն այնուամենայնիվ բարելավվեց, քանի որ կրճատվեցին հիմնարկի

թմրանյութերից կախվածություն ունեցող անձանց համար հատուկ հսկվող սենյակներ, որտեղ նրանք կարող են ընդունել իրենց անհրաժեշտ թմրանյութերը մաքուր պայմաններում, բժիշկների հսկողության տակ: Նման նախաձեռնությունները, որտեղ անձինք ստանում են բժիշկների և հոգեբանների ծառայություններ, մեծապես նպաստել են թմրանյութերից վերականգնմանն ու նվազեցրել են հասարակությունից նրանց մեկուսացման և օտարման մակարդակը:

Դեպքի քննություն N7. Ռեկոլետա (Սանտյագո քաղաքի վարչական շրջան), Չիլի - մատչելի դեղեր

Երկրում, որը հայտնի է իր խորը արմատներ ունեցող նեոլիբերալիզմով, Ռեկոլետա համայնքը, կարելի է ասել, շարժվում է ընդհանուր թրենդին հանդիպակա՝ Սանտյագոյի հյուսիսում գտնվող այս վարչական շրջանում բնակչության 14 տոկոսն ապրում է աղքատության մեջ. դա երկու անգամ ավելին է, քան ազգային վիճակագրական միջին ցուցանիշը: Զաղաքապետ Դանիել Խադուեն, որը հաղթել էր 2014թ. ընտրություններում, մեկնարկեց առողջապահական համակարգերի համայնքային տնօրինման վերականգնումը և մշակեց կրթության ու բնակարանային ոլորտի նոր համայնքային ծրագրեր:

Չիլիում շատերը դեռ իրենց դեղորայքների օգտագործման համար կախված են մասնավոր դեղատներից: Երկրի դեղատների 90 տոկոսը կառավարող երեք մոնոպոլ ընկերությունների կողմից որոշվող և պետության կողմից չկարգավորվող գները նրանց խոցելի են դարձնում: Բնակչությանը մատչելի դեղորայքով ապահովելու նպատակով Ռեկոլետայի իշխանությունները 2015թ. ստեղծեցին երկրի առաջին «հանրային դեղատունը»: Վերականգնելով պետության՝ որպես ապրանքների մատակարարողի դերը, այս մոդելը նաև ակտիվացրեց սոցիալական համերաշխությունը, քանի որ սուբսիդիաների միջոցով ապահովվեց ցածր եկամուտներ ունեցող անձանց համար դեղորայքների մատչելիությունը: Ստեղծվելուց հինգ տարի հետո այս մոդելն ապացուցել է իր արդյունավետությունը: Զաղաքի կողմից արված հետազոտությունը ցույց է տվել, որ քաղաքացիների համար զգալիորեն նվազել է դեղորայքի ծախսը. որոշ մարդկանց մոտ

դեղորայքի համար ամսական ծախսը նույնիսկ կրճատվել է 70 տոկոսով¹⁹:

Դեպքի քննություն N8. Սան Պաուլո, Բրազիլիա - ռեաբիլիտացիոն ծառայություն

Վերջին 20 տարվա ընթացքում Սան Պաուլոյի Լուզ վարչական շրջանը հայտնի էր կացարան չունեցող և կոկաինի կախվածություն ունեցող անձանց բարձր քանակով: 90-ականների և 2000-ականների ընթացքում այս խնդրին բազմիցս փորձել են լուծում տալ՝ ուժեղացնելով քրեական պատիժը և գործող անվտանգության միջոցառումները: Սակայն 2014թ. հունվարին քաղաքապետ Ֆերնանդո Զադուդը որոշեց փորձարկել նոր մոտեցում. բանակցել համայնքային հեղինակությունների ու ԶԿ-ների հետ՝ 147 վրաններն ապամոնտաժելու և կոկաին օգտագործողների հետ աշխատելու համար:

Նոր նախաձեռնությունները «Բաց թւեր» համայնքային ծրագրի մաս են կազմում ու ներառում են թմրանյութի կախվածություն ունեցող անձանց կացարանի ու օրական սննդի տրամադրում, աշխատանքի տեղավորում քաղաքապետարանի հիմնարկներում, մուտք դեպի առողջապահական ծառայություններ՝ առանց նրանց թմրանյութի օգտագործումից հրաժարվել ստիպելուց: Նախաձեռնության մեկնարկից հետո ծրագրին դիմած անձանց 73 տոկոսը դադարեց կոկաին օգտագործել՝ այդպիսով խնայելով քաղաքի R\$68 (€11.8) միլիոնի չափով միջոցներ²⁰:

7. (Վերա)համայնքայնացումը ստեղծում է ժողովրդավար հանրային տնօրինում

Հանրային սեփականությունը միշտ չէ ժողովրդավար կամ արդյունավետ: Պետական ոլորտը նույնպես կարող է ճահճանալ բյուրոկրատիայից ու անարդյունավետությունից, կամ ծառայել որոշակի շահերի, կոռուպցիայի և ավտորիտար ղեկավարների: Այնուամենայնիվ, այս ամենից գերծ չէ նաև մասնավոր ոլորտը:

Հզոր ու բարձրորակ հանրային ծառայություններ կառուցելու համար անհրաժեշտ է այնպիսի հանրային կառավարում,

որի ժամանակ քաղաքացիները կկարողանան ուղղակի և անուղղակի կերպով մասնակցել ժողովրդավար որոշումների կայացմանը: Դրա համար տարբեր ձևեր գոյություն ունեն: (Վերա)համայնքայնացմամբ բերված փոփոխություններն իրենց մեջ ներառում են հաշվետվողականություն, թափանցիկություն և բաց ինֆորմացիայի հրապարակմամբ համայնքային հիմնարկների մասնակցային կառավարման գոյացում: Համայնքի կողմից հետ վերցրած կամ համայնքի կողմից ստեղծված հիմնարկը կարող է ժողովրդավարացնել իր կառավարումը՝ ապահովելով, որ ծառայությունից օգտվողների ներկայացուցիչները կառավարման խորհրդի մաս կազմեն, ինչպես, օրինակ, Գրենոբլի և Փարիզի ջրամատակարարման ծառայություններում: Իսկ Դանիայում օրենսդրությունը պահանջում է, որ հանրային հիմնարկների կառավարման խորհրդի մեկ երրորդը բաղկացած լինի աշխատողների ներկայացուցիչներից:

Հանրային հիմնարկներում աշխատողների ու դրանց ծառայությունից օգտվողների ներկայացուցիչների ընդգրկումը որոշումների ընդունող մարմիններում կառավարման բարելավման ու հանրային սեփականությունն ավելի իմաստալից դարձնելու ամենակարևոր ուղիներից մեկ է: Ներկայացուցչականությունը լայն ու արդյունավետ հնարավորություններ է տալիս օգտվողներին, ինչպիսիք են վերջիններիս կողմից ժողովների ու վերահսկման մարմինների ստեղծումը: Փարիզում, Իսպանիայի Բարսելոնա և Տեռասա քաղաքներում համայնքային հիմնարկներն իրենց ղեկավար մարմիններում ներառում են աշխատողների ու քաղաքացիների ներկայացուցիչների: Տեռասայում «Տեռասայի ջրային վերահսկողություն» անկախ կազմակերպությունը ստեղծվել է քաղաքի ջրամատակարարման հետ կապված քաղաքականության մշակմանը քաղաքացիների մասնակցությունն ապահովելու համար:

Այս հետազոտման մեջ առնվազն 149 ղեկավար գրանցել ենք վերահամայնքայնացման հետևանքով կառավարման ժողովրդավարության բարելավման մասին կոնկրետ մատնանշումներ: Մեքսիկայի Ռամոս Արիզպե քաղաքը 2014թ. վերջ տվեց ջրամատակարարման պետություն-մասնավոր գործընկերությունն ու (վերա)համայնքայնացրեց ոլորտը: Քաղաքապետը հայտարարեց, որ

COMPARA նոր ստեղծված համայնքային հիմնարկը բացելու է իր կառավարման համակարգը, որպեսզի վերափոխի իր քաղաքացիների և ծառայություն մատուցողների միջև շփումը: Հիմնարկի հիմնական ղեկավար մարմիններից մեկը՝ տեխնիկական խորհուրդը կազմված էր քաղաքապետից, պետական ջրամատակա-րարման համակարգի երկու ներկայացուցիչներից, COMPARA-ի ղեկավարից, հետազոտական կենտրոնի փորձագետներից և ջրի սպառողների միության ակտիվիստներից²¹: Ռամոս Արիզպե և Տեռասա քաղաքների օրինակները ցույց են տալիս, որ համայնքային հիմնարկի ժողովրդավարության աստիճանը կախված է սոցիալական պայքարից, այսինքն, թե որքանով են քաղաքացիները կազմակերպվում և պահանջում, որ հանրային ծառայությունն ունենա ժողովրդական տնօրինում և մասնակցային կառավարման պրոցես:

Հանրային կառավարումը կարող է լինել տեղի քաղաքացիների ու աշխատողների կոոպերատիվների հետ համագործակցության տեսքով, կամ հանրային հիմնարկի ու հասարակական միավորման համատեղ ղեկավարման միջոցով: Գերմանիայի Վոլֆհազեն քաղաքում այն նախաձեռնությունը, որն օգնեց ֆինանսավորել հողմային տուրբինների տեղադրումը, նաև մեկ-չորրորդով տնօրինում է էլեկտրականության պետական ընկերությունը և դրա կառավարման խորհրդում ունի երկու ներկայացուցիչ²²: Տեղական էլեկտրական ցանցերի (վերա)համայնքայնացումից առաջացած այսպիսի համատեղ տնօրինումը հանգեցրել է էլեկտրականության սակագների նվազման, օգնել է աշխատատեղերի ավելացմանը և նույնիսկ թույլ է տվել կառուցել մանկապարտեզ:

Հետաքրքիր է, որ հասարակական նախաձեռնությունների հետ գործընկերություններն ու համագործակցություններն օգնում են վերափոխել հանրային ինստիտուտների մշակույթը և խորացնում են ժողովրդավարական սովորույթները: Դրանք վերակառուցում են կառավարության, տնտեսության ու մարդկանց միջև շփումն այնպես, որ սոցիալական և բնապահպանական նպատակներն առաջնային դառնան: Շատ են օրինակները, երբ իշխանություններն աշխատում են հասարակական կազմակերպությունների ու քաղաքացիական նախաձեռնությունների հետ: Դանիայի քաղաքներն աջակցում են Wireless

Leiden միավորմանը Leiden քաղաքում անվճար WiFi տրամադրելու գործում: Իսպանիայի առաջադեմ քաղաքները խոշոր մասնավոր ընկերությունների փոխարեն ընտրում են Som Energia, GoiEner, EnergEtica անկախ Էներգամատակարար կոոպերատիվներին:

Դեպքի քննություն N9. Տեռասա, Իսպանիա – Ջրամատակարարում

Տեռասայում Կատալանիայի երրորդ խոշոր քաղաքում, Taula de l'Aigua de Terrassa քաղաքացիական պլատֆորմը դեռ 2014-ից ջրամատակարարումը դեպի հանրային կառավարում վերադարձնելու արշավ է սկսել: 2015-ին նրանց ձևավորած «Հանրային ջրի սոցիալական Համաձայնագիրը», որի օրակարգն էր ունենալ հանրային, միասնական և մասնակցային կառավարմամբ ջրամատակարարման համակարգ, աջակցություն ստացավ քաղաքային ընտրություններում մասնակցող թեկնածուների կողմից: Հաջորդ տարի քաղաքի Նորընտիր ավագանին ջրի կառավարումը վերադարձնելուն միտված քայլ կատարեց և 2018թ. ստեղծվեց Taigua պետական հիմնարկը: Շուտով արդեն Տեռասայի քաղաքացիական խորհուրդը, որը մարմին է, ում որոշումները հաշվի են առնվում քաղաքի կառավարման ընթացքում, հիմնադրեց «Տեռասայի ջրային վերահսկողությունը» (Observatorio del Agua de Terrassa, OAT):

Վերահսկիչ այս մարմինը գործում է քաղաքային իշխանությունից անկախ: Այն առաջնորդվում է «Հանրային ջրի սոցիալական Համաձայնագրով» և ունի հանրային ջրամատակարարման ոլորտում որոշումների ընդունման մանդատ: OAT-ը, նպատակ ունենալով խթանել քաղաքացիների մասնակցությունն ու ռազմավարական որոշումների կայացումը, իր մեջ ներառում է յուրաքանչյուր քաղաքական խմբից, քաղաքային իշխանությունից, տեխնիկական անձնակազմից, բիզնեսներից, հասարակական միավորումներից և տեղական համալսարանական հետազոտողներից մեկական ներկայացուցիչ: Եվ քանի որ այս մոդելում հաջողվել է ստանալ սպառողների մասնակցությամբ կոլեկտիվ կառավարվող և արտադրվող ջրային ծառայություններ, այն օրինակ է ծառայել նաև Կատալոնիայի և ողջ

Իսպանիայի այլ բազմաթիվ քաղաքային բնակավայրերի համար²³:

Դեպքի քննություն N10. Պլիմուտ, Միացյալ Թագավորություն – Էներգետիկ բարեփոխում

2013-ին Պլիմուտ քաղաքն իր քաղաքացիների հետ մեկտեղ հիմնադրեց «Պլիմուտի Էներգետիկ համայնքը» (PEC): Այն անդամակցային կառույց էր, որտեղ անդամավճարներից հավաքված ռեսուրսներն օգտագործում էին համայնքի նպատակների իրագործման համար: Քաղաքային իշխանությունը կառույցին տրամադրում էր դրամաշնորհներ, վարկեր և փորձագետներ, որպեսզի ապահովի «արդար, մատչելի և ցածր-ածխածնային Էներգետիկ համակարգ, որի սրտում կլինի տեղի բնակչությունը»: 2014-ին PEC-ը մշակեց իր սեփական կանաչ Էներգիայի հիմնարկը՝ PEC Renewables-ը, որը ֆինանսավորում, տեղադրում և սպասարկում էր վերականգնվող Էներգիայով աշխատող համակարգեր: Արդեն 2019-ին PEC-ն օգնել էր ավելի քան 20 000 տնային տնտեսությունների կատարել £1 հոսանքի ծախսի խնայողություն, իսկ ինքը կարողացավ փակել £26,000 չափով սեփական պարտքը: PEC-ին նաև հաջողվեց կառուցել արևային պանելների դաշտ աղտոտված հողատարածքի վրա, որը դպրոցների ու պետհիմնարկների կտուրների վրա տեղադրված արևային պանելների հետ համատեղ մաքուր Էներգիա է մատակարարում մոտ 2000 տնային տնտեսություններին: Պանելներից երկարաժամկետ ստացվող հասույթը նախատեսվում է ներդնել Պլիմուտում ածխածնային արտանետումների նվազեցման և Էներգետիկ աղքատության հաղթահարման մեջ²⁴: Զանի որ քաղաքապետարանը շարունակում է աշխատել PEC-ի հետ համատեղ, այսպիսի պետական-քաղաքացիական գործընկերությունը ժողովրդավարական շարժիչ ուժ է դառնում քաղաքի տեղական Էներգետիկ անցման համար²⁴:

8. Վերահամայնքայնացումը պետք է համագործակցի աշխատողների հետ ու սովորի նրանցից

Արհմիությունների և քաղաասարակության կազմակերպությունների միավորումները բազմաթիվ հաջողված արշավներ են մղել մասնավորեցման դեմ: Նիգերիայի մայրաքաղաք Լագոսում արհմիությունների, համայնքների ու ՀԿ-ների միավորումը մշակել է քաղաքացիական ռազմավարություն՝ ուղղված պետական ջրամատակարարման հիմնարկի բարեփոխումներին, որպեսզի այն այլընտրանք հանդիսանա մասնավորեցմանը: Հանրային ծառայությունների միջազգային արհմիությունը (PSI - Public Services International) աշխատանք է տարել իրեն անդամակցող արհմիությունների հետ, հանրային ծառայությունների վերահամայնքայնացմանը պատրաստվելու համար անհրաժեշտ գիտելիքները ստանալու համար²⁵:

Հանրային ծառայությունների վերահամայնքայնացումը միանշանակ ազդեցություն է թողնում աշխատողների վրա, քանի որ վերջիններս են մատուցում ծառայություններն ու սպասարկում այդ ծառայությունների ենթակառուցվածքները: Աշխատանքային տեսակետից ամեն վերահամայնքայնացման դեպք յուրահատուկ է՝ պայմանավորված լինելով աշխատանքային պայմանների ու իրավունքների հետ կապված տեղական ու պետական օրենսդրական առանձնահատկություններով: Կարևոր նախապայմաններից է վաղ փուլում հաղորդակցվել ծառայությունների աշխատողների հետ և աջակցել նրանց՝ համայնքայնացման ողջ պրոցեսի ընթացքում: Սա ներառում է հանրապետական արհմիությունների և նրանց տեղային մասնաճյուղերի միջև պատշաճ հաղորդակցում և համագործակցություն, ինչպես նաև տեղական իշխանությունների հետ բանակցություններ՝ բոլոր աշխատողների համար մասնավոր-պետական արդարացի անցումն ապահովելու նպատակով:

Նորվեգիայում ՌենոՆորդեն ընկերության սնանկացումից հետո, որը խաթարեց 137 համայնքներում աղբահանության ծառայությունները²⁶, համայնքային աշխատողների արհմիությունը գործարկեց մի շարք հաջող ռազմավարություններ:

Արհմիության ազգային գրասենյակը, համագործակցելով տարածքային ու քաղաքային արհմիությունների հետ, համոզեց տեղի համայնքների ավագանիներին դեմ քվեարկել նոր հայտարարվող աղբահանության ծառայությունների մրցույթին՝ այսպիսով հաջողությամբ հետ վերցնելով աղբահանությունը: Նորվեգիայի հանրային ծառայությունների արհմիությունը, Fagforbundet-ը օգտագործեց այս խոցելի ժամանակահատվածը՝ կարողանալով մեծացնել իր անդամակցությունը ներառական կազմակերպական ռազմավարությամբ: Նրանք մինչև վերահամայնքայնացումը կազմակերպեցին մասնավոր ընկերության աշխատողներին, որոնցից շատերը ժամանակավոր պայմանագրով աշխատող միգրանտներ էին: Արհմիությունը հաջողությամբ կարողացավ միասնականություն ձևավորել արհմիության անդամ չհանդիսացող աշխատողների հետ, իսկ համայնքայնացումից հետո դա թույլ տվեց ունենալ անժամկետ պայմանագրեր ու բարելավված աշխատանքային պայմաններ համայնքային աշխատողների համար:

Նորվեգիայի քաղաքների կեսից ավելին ունի տեղական եռակողմ համագործակցության փորձ: Քաղաքական գործիչները, վարչական ղեկավարներն ու արհմիությունները միասին կառուցողական աշխատանք են տանում քաղաքային խնդիրների լավագույն լուծումները համատեղ գտնելու համար: Աշխատողների և այլոց ձայները քաղաքային իշխանությանը լսելի դարձնելու համար ստեղծվում են քաղաքացիական ֆորումներ, որոնք պետք է համակարգորեն համագործակցեն քաղաքի որոշում ընդունողների հետ: Fagforbundet-ի համոզմամբ՝ վերահամայնքայնացումն ու եռակողմ համագործակցությունը աշխատողների համար օգտակար գործիքներ են և օգնում են հետագայում պայքարել հանրային ու պետական ոլորտներում առևտրոսինգի ու մասնավորեցման դեմ²⁷:

9. Հանրային սեփականության վերակառուցումը Էկոֆեմիսիստ հանրային ծառայությունների համար

Էկոֆեմիսիստ հանրային ծառայությունների կենտրոնում ոչ թե եկամտի, այլ մարդկանց ու մոլորակի մասին հոգալն է: Հանրային ծառայությունների Էկոֆեմիսիստական

մոտեցմամբ վերաբերվելը մեզ ստիպում է գիտակցել, որ մենք, որպես մարդ, խորապես կախված ենք իրարից, ինչպես նաև այն բիոհամակարգից, որտեղ մենք ապրում ենք: Հետևաբար, այսպիսի մոտեցումը օգնում է վերափոխել հանրային ծառայությունների տնօրինումն ու կառուցվածքը:

Մասնավորեցման, պետություն-մասնավոր գործընկերության և աուֆստրսինգի հիմքում ընկած է կարճաժամկետ ֆինանսական շահը: Ծառայությունների այսպիսի մոդելն ունի արդեն իսկ եղած անարդարությունը խորացնելու և էկոհամակարգերը ոչնչացնելու հատկություն: Դրանք նաև հանրային ծառայություններից առավելապես կախված խոցելի խմբերին վնաս հասցնել հատկություն ունեն, իսկ այդ խմբերում անհամեմատ մեծ մասը կանայք են կազմում:

Երբ կոշտ խնայողության և մասնավորեցման քաղաքականության արդյունքում կրճատվում է ծառայության ֆինանսավորումը, առաջին հերթին ծերերի և երեխաների խնամքն է դառնում ոչ մատչելի: Խնամքի աշխատանքը արդյունքում բաժին է հասնում կանանց, ինչը ներկայիս գենդերացված և ռասայական տնտեսական մոդելից բխող աշխատանքի բաժանման հետևանք է: Խնամքի և տնային աշխատանքի մեծ մասը ոչ միայն կանանց է բաժին հասնում, ընդ որում այն միշտ չէ պատշաճ կամ ընդհանրապես վճարվում, բայց և հիմնականում այդպիսի ծառայությունները աուֆստրսինգով պատվիրակվում են գունավոր ռասայի կանանց: Բացի այդ, խնամքի, մաքրության և կրթության ոլորտները մասնավորեցնելիս այս ոլորտներում կանանց բարձր քանակն է իր վրա կրում բեռի մեծ մասը: Այդպիսով, մասնավորեցումը թիրախավորում է արդեն իսկ ամենախոցելի խմբերին, մանավանդ նրանց, ովքեր առերեսվում են աշխատանքային շուկայում խտրականության: Արդյունքում՝ մուգ և գունավոր ռասայի կանայք, ազգային փոքրամասնություն կազմող կանայք, միգրանտ կանայք և LQFS+ խմբերը, այլ խոցելի խմբերի հետ մեկտեղ վճարում են մասնավորեցման ամենաբարձր գինը: Փաստորեն, գենդերային արդարությունն ու մասնավորեցումն իրար խորապես հակադրվող երևույթներ են: Ու չնայած ապամասնավորեցումն ու հանրային ծառայությունների վերակառուցումը բարելավում է ծառայությունների մատչելիությունը՝ հանրային կառավարումը, ցավոք, դեռ գենդերային արդարության երաշխիք չէ:

Չնայած կանանց հավասար ներկայացուցչությունը հիմնարկների ղեկավար մարմիններում անհրաժեշտություն է, այն չի կարող երաշխավորել, որ հանրային ծառայությունները կկարողանան լուծել աղքատ կանանց կարիքները և պատշաճ բնապահական կան գործունեություն ծավալել: Էկոֆեմինիստական մոտեցումը թույլ կտա խորացնել ժողովրդավարական մակարդակն այնպես, որ ծառայությունները կազմակերպվեն ներքևից վերև ու հավասարապես ծառայեն թե՛ մարդկային, և թե՛ ոչ մարդկային (բնության) կյանքին: Վերջին հաշվով մենք պետք է ֆեմինիզացնենք քաղաքական բոլոր գործընթացները²⁸: Սա նշանակելու է, որ քաղաքական գործիչներն ու հանրային կառավարման օղակները պետք է ոչ միայն լսեն քաղաքացիներին, բայց նաև պաշտոնապես ընդգրկեն նրանց քաղաքականության մշակման ու որոշումների ընդունման գործընթացներում: Անհրաժեշտ են լինելու նոր մեխանիզմներ, որոնց օգնությամբ խոցելի ու մարգինալացված խմբերը հնարավորություն կստանան երաշխավորվելու, որ հանրային ծառայությունները բացի սակավաթիվ էլիտայից կբարելավվեն նաև բոլորի ամենօրյա կյանքը: Որովհետև, ինչպես ցույց տվեց COVID-19 ճգնաժամը, հասարակությունն այնքանով է անվտանգ, առողջ և դիմացկուն, որքանով այդ հասարակության ամենաճնշված խմբերը²⁹:

Ֆիլիպիններում որոշ քաղաքներ կանանց համար նախատեսված ծառայությունների առաջամարտիկն են: Կալուկան քաղաքում տեղի կանանց կողմից ստեղծված «Բազուկ Սիլանգ Կոոպերատիվը» զբաղվում է աղքատ թաղամասերի բնակիչներին շշալցված ջրի մատակարարմամբ: Ստացված եկամուտները հետ են վերադարձվում կոոպերատիվի անդամներին և ներդրվում են այնպիսի հանրային ծառայությունների մեջ, ինչպիսին են երեխաների խնամքը: 2019-ին Բազուկ Սիլանգը ծառայություն է մատուցել 742 տնային տնտեսությունների: Մեկ այլ օրինակում Ֆիլիպինների Բինալունան քաղաքը 2015թ.-ից սկսած ֆինանսական աջակցություն էր տրամադրում կանանց, երեխաներին, միայնակ ծնողներին ու տարեցներին, ինչպես նաև օգնում էր հոգալ իրենց առաջնային առողջապահական և երեխաների խնամքի ծախսերը³⁰:

10. (Վերա)համայնքայնացումը կարող է ամրապնդել համայնքային բարեկեցությունն ու տեղական տնտեսությունը

Աղբահանության, սննդի, մաքրության ու հեռահաղորդակցության ծառայությունների հետ-վերցնելը և համայնքին պատկանող այդպիսի ծառայությունների ստեղծելը կարող է վերափոխել ողջ համայնքը: Երբ հանրային ու կոմունալ ծառայություն մատուցող ընկերությունը կառավարվում է ժողովրդավար կերպով, մեծանում է հավանականությունը, որ ստացված հասույթը նորից ներդրվելու է համայնքի մեջ և տեղայնացնելու է տնտեսությունը: ԱՄՆ-ում տեղակայված «Դիմոքրսի Զըլաբորեյթիվ» կազմակերպությունը գործածության մեջ է դրել «համայնքային հարստության կերտում» (community wealth building) եզրույթը, որը ենթադրում է, որ քաղաքային ու պետական հաստատությունների կողմից կատարվող պետգնումները, զբաղվածությունը և ներդրումային որոշումները պետք է միտված լինեն արդարացի և բնապահպանական տնտեսության զարգացմանը:

Պետական հաստատությունները, ինչպիսիք են քաղաքապետարանները, հիվանդանոցները, համալսարանները, պետական հեռահաղորդակցության ու աղբահանության հիմնարկները, մեծ տեղային նշանակություն և մարդկանց կյանքի որակը բարելավելու կարողություն ունեն: Օրինակ՝ քաղաքային իշխանությունները պետական գնումները կատարում են աշխատողների կոոպերատիվների հետ համատեղ, որպեսզի մաքուր պահեն իրենց քաղաքը (Չիլիի Վալպարաիսո քաղաքը): Նրանք նաև համագործակցում են տեղական ֆերմերների հետ, որպեսզի պաշտպանեն տեղական հանքային ջուրը և ռեստորաններին մատակարարեն տեղի օրգանական գյուղմթերքը (Ֆրանսիայի Ռեննե քաղաք): Տնտեսության տեղայնացումը երբեմն հանգեցնում է նաև հանրային ծառայությունները շուկայական հարաբերություններից դուրս հանելուն և սպառողի համար սակագները նվազեցնելուն: Օրինակ, Միացյալ Թագավորության Այլինգտոն քաղաքը 2011թ.-ին հետ բերեց մոտ 35 հազար պետական կացարաններ (council house): Վեց տարի անց քաղաքը ստեղծեց Angelic Energy նոր հանրային էներգետիկ ընկերությունը: Նշված որոշումները թույլ տվեցին համայնքին մատակարարել կացարաններ, էլեկտրաէներգիա

և բնական գազ շատ ավելի արդար գներով, մասնավորապես՝ ցածր եկամուտ ունեցող տնային տնտեսությունների համար:

Այս աշխատության մեջ բերվում են 297 (վերա)համայնքայնացման դեպքերի օրինակներ, որոնք ներդրում ունեն, կամ պատրաստվում են ներդրում ունենալ համայնքային հարստության կերտման և դիմացկուն տեղական տնտեսության կայունության մեջ: Դեպքերից որոշներն իրենցից ներկայացնում են տեղի օգտակար հանածոների ավելի պատասխանատու օգտագործում, մյուսները տեղի բնակչության համար ստեղծում են իմաստալից աշխատատեղեր և նոր կենսակայուն տնտեսական գործունեություններ: Տեղական բնապահպանական գիտելիքի ու փորձի պահպանումն ու զարգացումը հիմնարար դեր ունի ապագային միտված հանրային ծառայությունների ստեղծման գործընթացում:

Դեպքի քննություն N11. ԱՄՆ քաղաքներ - Հեռահաղորդակցություն

Վերջին մի քանի տարվա ընթացքում Ամերիկայի Միացյալ Նահանգներում ընդհանուր առմամբ 141 նոր համայնքային հեռահաղորդակցության ծառայություններ են ստեղծվել տեղական ինքնակառավարման մարմիններ կողմից: Քաղաքները, նպատակ ունենալով բարելավել կապի մատչելիություն ու ժողովրդավար կառավարումը, հանդես են գալիս աշխատատեղերի ստեղծման և տնտեսական ակտիվության բարձրացման (օրինակ՝ Թենեսի Նահանգի Թալլահոմա, Չատանուգա և Թոմասվիլ քաղաքներում), կյանքի որակի բարելավման (Յուսիսային Կարոլինայի Ուիլսոնում և Մասաչուսեթսի Մաունթ Վաշինգտոնում); առողջապահության ու կրթության մատչելիության ծրագրերով (օրինակ՝ ECFiber շահույթ չհետապնդող ինտերնետ պրովայդերը Վերմոնտում):

Ջորջիա Նահանգի Թոմասվիլ քաղաքում «Community Network Services (CNS)» հանրային ինտերնետ ծառայություն մատուցող հիմնարկն օգնում է փոքր բիզնեսների գործունեությանը և աշխուժացնում է քաղաքի կենտրոնը: Միևնույն տա Նահանգի Սքոթ Բաունթի քաղաքի իշխանությունները ստեղծեցին հանրային կաբելային ինտերնետ՝ սկզբում նպատակ ունենալով միացնել քաղաքի հաստատությունները, ինչպիսիք են դպրոցները և այլ քաղաքային հիմնարկները: Այդ ցանցը ոչ

միայն 1000 նոր աշխատատեղ ստեղծեց, այլև զգալիորեն լավացրեց կրթական հաստատություններում ինտերնետ հասանելիությունը: Հանրային կառավարումն օգնեց հսկայական խնայողություններ անել տեղի դպրոցի համար, որտեղ ինտերնետի արժեքը 1 մեգաբիթ/վ արագության համար \$58-ից նվազեց մինչև \$7: Թենեսի նահանգի Մորրիսթաուն քաղաքում նոր ստեղծված հանրային FiberNET-ը մատուցում է բարձրորակ և մատչելի ինտերնետ ընտանիքներին, փոքր ձեռնարկություններին և քաղաքային հաստատություններին: Ավելին, կաբելային ծառայությունը խնայել է զգալի միջոցներ, ստեղծել է աշխատատեղեր և նույնիսկ քաղաքի մոտակա բիզնեսներին ստիպել է տեղափոխվել Մորրիսթաուն՝ ավելի արագ ինտերնետ ունենալու պատրվակով³¹:

փաստի առթիվ քաղաքացիներից կողմից հարյուրավոր դատական հայցերից հետո Կահիրեի իշխանությունները 2017թ. որոշեցին վերահամայնքայնացնել համակարգը և կրկին վերադառնալ Չաբային թաղամասի հետ համագործակցությանը: Չաբային համայնքի կողմից գործարկվող աղբահանության համակարգը ցույց է տալիս, որ վերամշակող տեղական տնտեսության կերտումը հնարավոր է նույնիսկ Կահիրեի պես 18 միլիոն բնակչություն ունեցող մեգապոլիսներում³²:

11. (Վերա)համայնքայնացումը բնապահպանական ճգնաժամը հաղթահարելու ռազմավարություն է

Դեպքի քննություն N12. Կահիրեի Չաբային թաղամաս, Եգիպտոս – աղբահանության ծառայություն

Չաբային թաղամասը, որում բնակվում է շուրջ 70.000 բնակիչ, ավանդականորեն տեսակավորում էր Կահիրեի հիմնականում օրգանական թափոնների երկու երրորդը՝ օրական մոտ 15.000 տոննա: Դռնեղուռ հավաքվող ու մշակվող աղբի համակարգը թույլ էր տալիս հասցնել վերամշակումը 85%-ի և մեծամասամբ հիմնված էր խոզերի վրա, որոնց կերակրվում էր օրգանական աղբը:

Կահիրեի աղբահանության համակարգը մասնավորեցվեց 2000 թվականին և մասնավոր ընկերությունները, որոնք վերցրեցին աղբահանությունը, հասան ընդամենը 25% վերամշակման մակարդակի: Նրանց նույնիսկ չէր հաջողվում հավաքել աղբը քաղաքի որոշ թաղամասերում, փոխարենը՝ հարկադրում էին քաղաքացիներին ինքնուրույն բերել աղբը հավաքագրման կետերոններ, և դեռ ամսավճար էին պահանջում այդպիսի ծառայության համար: Իսկ Չաբային թաղամասի աշխատողները, որոնք ընդունվել էին աշխատանքի մասնավոր ընկերությունների մոտ, այժմ ստանում էին 75%-ով ավելի քիչ, քան նախկինում: Քաղաքացիների համար աղբահանության վարձը ընդգրկվում էր էլեկտրականության վարձի հաշվի մեջ՝ գումարվելով վերջինիս:

Էլեկտրականության վարձի մեջ ընդգրկելու

Բնապահպանական ճգնաժամը չափազանց բարդ է լինելու հաղթահարել, քանի դեռ մասնավոր օպերատորներն օգտագործում են էներգետիկ ծառայություններն ու ենթակառուցվածքներն իրենց շահույթի համար: Շահույթի բազմապատկման մոլուցքն ու ներդրումներից շահավետության սպասելիքներն այդքան էլ համատեղելի չեն էներգառեսուրսների օգտագործման կրճատման և բնապահպանական խնդիրների մասին մտորումների հետ: Մյուս կողմից՝ անցումը դեպի ցածր ածխածնային արտանետումներով տնտեսություն պահանջում է այլևս հետ կանգնել բնական ռեսուրսների ու հանածոների անընդհատ աճող շահագործման գաղափարից, քանի որ այն աղետալի հետևանքներ է թողնում բնության ու կլիմայի վրա:

Համայնքային իշխանություններն ու տեղական ինքնակառավարման մարմինները մասնավոր միջազգային ընկերություններից սովորաբար ավելի բարենպաստ հնարավորություններ ունեն երկարաժամկետ բնապահպանական խնդիրներին նախապատվություն տալու՝ կարճաժամկետ ֆինանսական ներդրումների փոխարեն:

Չնայած գլոբալ էներգետիկ անցման համար կարևոր է միջազգային ու պետական մակարդակներով համագործակցությունը, շատ համայնքներ, քաղաքային բնակիչներ ու քաղաքներ արդեն իսկ միջոցներ են ձեռնարկում բնապահպանական ճգնաժամին հակազդելու համար, օրինակ՝ ջերմամեկուսացնում են

բնակարանները, տեղադրում են կանաչ էներգիա արտադրող համակարգեր, տեղայնացնում են մնդի ու գյուղատնտեսական համակարգերը, արդիականացնում են եղանակային պայմանների հակազդելու համակարգերը:

Մեր հետազոտության մեջ մենք տեսանք, որ առնվազն 119 դեպքում վերահամայնքայնացման հիմնական պատճառը վերականգնվող էներգիային անցնելն ու CO₂ արտանետումների նվազեցնելն էր՝ բնապահպանական ճգնաժամը հաղթահարելու նպատակով: 2017-ից 2019թթ. ընթացքում էներգետիկ համակարգերի (վերա)համայնքայնացման դեպքերն աճել են 20%-ով՝ հասնելով ընդհանուր առմամբ 374-ի: Շատ երկրներում էներգետիկ ոլորտը գտնվում է մեկ կամ մի քանի խոշոր մասնավոր ընկերությունների մենաշնորհի ձեռքում: Եվ չնայած քաղիասարակության կողմից գործադրվող տասնամյակների ճնշմանը՝ այդ ընկերությունները շարունակում են արտադրել կամ ընդերքից հանել ավելի ու ավելի շատ վառելիքային հումքեր: Սա այն հիմնական պատճառներից է, թե ինչու են համայնքային իշխանությունները որոշում կայացնում ապամասնավորեցնել և հետ վերցնել էներգետիկ համակարգերն ու զարգացնել տեղական համայնքային ենթակառուցվածքներ, ինչպես, օրինակ, Միացյալ Թագավորության Նոթինգհեմ քաղաքում:

Ազատականացված էներգետիկ շուկայում, որտեղ խադի կանոնները հիմնված են խոշոր ընկերությունների միջև մրցակցության վրա, քաղաքները հնարավորություն չունեն պարզապես հետ վերցնել մասնավոր ընկերությունից իր գործունեությունը: Բայց քաղաքները կարող են ստեղծել իրենց զուգահեռ հանրային էներգետիկ հիմնարկները, որոնք ներդրում կունենան էներգախնայողական ծրագրերում և կարտադրեն արեգակնային ու քամու էներգիա: Ավելին, բարելավելով բնակելի ու հանրային շենքերի ջերմամեկուսացումը, քաղաքները կարող են զգալիորեն նվազեցնել էներգիայի օգտագործումն ու դարձնել այն բոլորի համար ավելի մատչելի³³:

2018թ.-ին Բուլղարիայի Դոբրիչ քաղաքը վերահամայնքայնացրեց քաղաքային լուսավորությունը: 2019թ.-ին քաղաքը փոխարինեց 1500 լուսավորության լամպերը նոր էներգախնայող LED լամպերով: Այսպիսով, փողոցի լուսավորման համար խնայվեց 47% էլեկտրաէներգիա: Բացի դրանից, քաղաքը

ջերմամեկուսացրեց 71 քաղաքային և 41 բազմաբնակարանային շենք, ինչով ջեռուցման համար վճարը ցածր եկամուտ ունեցողների համար նվազեց 30-ից 60 տոկոսով³⁴:

Ապամասնավորեցումը թույլ է տալիս քաղաքային իշխանություններին կորոդինացնել իրենց գործողությունները քաղաքային բնակչության հետ, որպեսզի լուծումներ գտնվի այսօրվա մեծագույն խնդիրների՝ բնապահպանական ճգնաժամի ու աղբատության համար: Առնվազն (վերա)համայնքայնացման 209 դեպքում նպատակ է դրվել մշակել բարելավված հավասարության, կայունության և սոցիալական համախմբվածության քաղաքականություն: Օրինակ, դրան հասնում են արտանետումների և էներգետիկ աղբատության նվազեցումը իրար հետ փոխկապակցելով: Այնինչ մասնավոր էներգետիկ ընկերությունները շարունակում են ապավինել վառելիքային հումքին, իսկ սպառողների համար սակագների բարձրացումը կարող է հանգեցնել էներգետիկ աղբատության մեջ ապրող մարդկանց համար ծանր հետևանքների³⁵:

Թե՛ բնապահպանական ճգնաժամերի հետևանքները, թե՛ քաղաքային իշխանությունների կողմից ձեռնարկված միջոցառումները բավականին բազմազան են՝ հաշվի առնելով աշխարհագրական առանձնահատկությունները: Գլոբալ Հարավի համայնքները ոչ միայն վաղուց առաջնագծում են բնապահպանական ճգնաժամերի դեմ պայքարում, այլև տեղի իշխանությունները գործ ունեն արդեն կլիմայական աղետների հետ: Օրինակ՝ Ֆիլիպիններում քաղաքներն աջակցող ծրագրեր են մշակում ոչ միայն ֆերմերների, բայց շատ ավելի խոցելի բնակչության համար:

Տրանսպորտի ու աղբահանության ծառայությունների հետ վերցնելը նույնպես կարող է օգնել նվազեցնել ջերմոցային գազերի արտանետումները: Դանիայի Ռոստերդամ և Հաագա քաղաքներում վերջերս հանրային տրանսպորտի վերահամայնքայնացումը թույլ տվեց այդ քաղաքներին փոխարինել քաղաքային ավտոբուսների մի մասը էլեկտրաավտոբուսներով: Մեկ այլ դեպքում՝ Ֆրանսիայի Բոլանսոն քաղաքը 2013 թվականին աղբահանությունը համայնքայնացնելու ժամանակ խոստացավ հասնել «զրո աղբի», և այսօր արդեն աղբի քանակը նվազել է 33 տոկոսով:

**Դեպքի քննություն N13. Քաղաքներ
Ֆիլիպիններում – ծայրահեղ եղանակային
արհավիրքներ**

Ֆիլիպինների Դոմանգաս, Գերոնա և Սիարգաո քաղաքներում տեղի իշխանությունները ֆերմերներին ու ձկնորսներին ծանր կլիմայական պայմաններում ու էքստրեմալ եղանակներում աշխատելու համար գիտելիքներ տալու նպատակով հիմնադրել են «կլիմայական դպրոցներ», որոնք կօգնեն հաղթահարել օրվա հացի հայթայթումը վտանգի տակ դնող բնական երևույթները: Դոմանգաս քաղաքի կլիմայական դպրոցի ուսանողները, սովորելով դիտարկել եղանակային պայմանների փոփոխություններն ու կիրառել համապատասխան միջոցներ, կարողացել են բարելավել տեղական բրնձի արտադրությունը³⁶:

**Դեպքի քննություն N14. Լանուզա,
Ֆիլիպիններ – աղետների ռիսկերի նվազեցում և
վերականգնում**

Ծովափնյա Լանուզա քաղաքը հիմնել է «Աղետների ռիսկերի նվազեցման և վերականգնման կենտրոն», որպեսզի բարելավի համայնքի դիմակայունությունը խորացող բնապահպանական ճգնաժամում: Քանի որ տեղի տնտեսությունը մեծապես կախված է անտառներից, ստորգետնյա ջրերից և մանգրովներից, քաղաքը համապարփակ մեթոդներ է օգտագործում Էկոհամակարգի և մարդկային կյանքի անկախությունն ապահովելու համար: Քաղաքի դիմակայունությունը բարձրացնելու համար կենտրոնն առաջնահերթություն է տալիս կանանց, երեխաների, ծերերի և առողջական խնդիրներ ունեցողների կարիքներին³⁷:

**Դեպքի քննություն N15. Քաղաք Ռենն,
Ֆրանսիա – Ջրամատակարարում, օրգանական
գյուղատնտեսություն և դպրոցականների
համար որակյալ սնունդ**

Ֆրանսիայի Բրիտտանի մարզի Ռենն քաղաքը վերահամայնքայնացրեց իր ջրամատակարարումը 2014 թվականին:

Աղտոտող արտադրական գյուղատնտեսությամբ հայտնի այդ մարզում ջրային աղբյուրների պահպանումը համայնքային օպերատորի համար հիմնական նպատակներից էր: Քաղաքի 2015 թ. մեկնարկած Տեղ դե Սուդս («Աղբյուրների երկիր») ծրագիրը օգնում էր ֆերմերներին անցում կատարել առանց թունաքիմիկատների Էկոլոգիական գյուղատնտեսական արտադրության, որպեսզի կասեցվի արտադրության հետևանքով ջրի աղտոտումը: Միաժամանակ, դա հանգեցրեց տեղական գյուղատնտեսական արտադրանքի պահանջարկին: Արտադրանքը սկսեց մատակարարվել տեղի դպրոցների ճաշարաններին, ինչպես նաև ստեղծվեց Տեղ դե Սուդս նոր բրենդը, որի ներքո գյուղմթերքն առաջարկվում էր տեղի խանութներին ու սուպերմարկետներին՝ որպես հայրենական, մաքուր, օրգանական և կենսակայուն արտադրանք: Մյուս Ֆրանսիական քաղաքները, ներառյալ Փարիզը, նույնպես փորձարկեցին նմանատիպ ծրագրեր՝ դպրոցներին մաքուր մոնիտորով ապահովելու և ջրերի Էկոլոգիան պահպանելու նպատակով³⁸:

**12. Պետություն-համայնք
գործընկերությունը կարող է պայքարել
կորպորատիվ իշխանության դեմ**

Վերահամայնքայնացումը շատ դեպքերում ոչ հավասար պայքար է: Տեղական քաղաքային իշխանություններն ու համայնքները ավելի քիչ ռեսուրսներ ունեն, քան մասնավոր ընկերություններն ու միջազգային կորպորացիաները: Պետություն-համայնք կամ հանրային-հանրային գործընկերությունը, լինի այն ֆորմալ, թե ինստիտուցիոնալիզացված, նույնիսկ որոշ դեպքերում քննադատական է մոտեցել (վերա)համայնքայնացման շարժմանը: Ֆրանսիայի ջրամատակարարման ոլորտում, որի բոլոր մակարդակները՝ քաղաքականությունը, հետազոտական գործունեությունը, տեխնոլոգիաները, տեղական իշխանությունների հետ աշխատանքը սկզբնական շրջանում լիովին պատկանում էին Suez և Veolia ընկերություններին, նոր համայնքային հիմնարկների ստեղծումը, ինչպես Գրենոբլում և Փարիզում, կարևոր դեր ունեցավ այդ տիպի համագործակցությանը զարկ տալուն: Առանց համայնքային մակարդակում այդպիսի համախմբվածության (վերա)համայնքայնացումը

հնարավոր չէր լինի³⁹:

Պետություն-համայնք համագործակցությունը շարունակում է կարևոր մասնակցություն ավերահամայնքային և գործընթացից հետո: Առավել ևս դա վերաբերում է հետազոտությանը և մշակմանը (R&D), քանի որ նոր հանրային ծառայությունները պետք է ի գործ լինեն հաղթահարել նոր մարտահարավերները: Պետական օպերատորների միջև համագործակցությունը, ինչպես նաև ակադեմիական հաստատությունների հետ գործընկերությունը կարող է արդյունավետ լինել այս համատեքստում: Այս տիպի գիտելիքի ստեղծումը և կառավարումը չի լինի կոմերցիոն նպատակներով կամ ստացված գիտելիքներն ու տեխնոլոգիաները վաճառելու նպատակով: Առաջին հերթին այն կատարվելու է հանրային շահի համար և գիտելիքը տեղական պայմաններին ադապտացնելու ճկունություն է ստեղծվելու:

Նմանատիպ պետական համագործակցությունը հիմք է նաև հանրային ծառայություններն այնպիսի տարածաշրջաններ և երկրներ հասցնելու համար, որտեղ մասնավոր ոլորտը չի ցանկանում կամ չի կարող ծառայության ծածկույթն ապահովել, ինչպես, օրինակ, գյուղական բնակավայրերում, ցածր եկամուտ ունեցող թաղամասերում, ներդրումների համար ոչ գրավիչ վայրերում: Այդպես եղավ ԱՄՆ գյուղական բնակավայրերում համայնքային արագընթաց ինտերնետ անցկացնելու դեպքում: Ջրային ոլորտում շահույթ չհետապնդող պետություն-համայնք համագործակցությունը օգնում է նոր ստեղծված փխրուն ջրային օպերատորներին կոնսոլիդացնել իրենց գործունեությունը (օրինակ՝ Գլոբալ Հարավում) և դառնալ արդյունավետ:

Հաճախ, գյուղական համայնքներում հանրային ծառայությունների միավորումը, այլ կերպ ասած դրանց խոշորացումը, գրավիչ է դարձնում դրանց հետագայում մասնավորեցնելու տեսանկյունից, քանի որ ավելի խոշոր շուկա է ստեղծվում մասնավոր ընկերությունների համար: Սակայն, հետաքրքրական է, որ նույն իրավիճակը կարող է նաև հակառակին ծառայել՝ խոշորացված հանրային ծառայությունը կարող է վերահամայնքայինացվել և ժողովրդավար կառավարման փոխանցվել ավելի խոշոր մասշտաբով:

Դեպքի քննություն N16. Նիցա քաղաքային ազլոմերացիա, Ֆրանսիա – Ջրամատակարարում

2013 թվականին Նիցա քաղաքի և շրջակա համայնքների ավագանու անդամները հայտարարեցին, որ քաղաքի ջրամատակարարումը հետզհետե պետք է անցնի պետական կառավարման: Ֆրանսիայի մեծությամբ հինգերորդ քաղաքում ջրամատակարարումը մասնավոր օպերատորի էր տրված հենց ջրային համակարգի ստեղծման առաջին օրվանից՝ 1864 թվականից:

Նիցայի Կոդ դ'Ազուր քաղաքային ազլոմերացիան, որը ստեղծվեց 2021թ., Ֆրանսիայում առաջինն էր: Ազլոմերացիան յուրահատուկ է նրանով, որ իր տարածքի մեծ մասը լեռնային կամ գյուղական բնակավայրեր են՝ սկսած Մերկոնտուր ազգային այգու ալպիական լեռնագագաթներից մինչև Միջերկրական ծով: Ազլոմերացիայում վերահամայնքայինացման գլխավոր պատճառը այդպիսի մեծ և բազմազան լանդշաֆտ ունեցող տարածքում «տարածաշրջանային համերաշխություն» ստեղծելու գաղափարն էր: Մասնավոր ընկերությունը այդպիսի խոշոր ու բարդ տարածքի համար այլևս պիտանի չէր: Այսօր Նիցայի 49 համայնքներից 33-ը, այսինքն մոտ 80%-ը կախված է արդեն նոր ստեղծած հանրային «Օ դ'Ազուր» ջրային հիմնարկից:

Միայն հանրային կառավարումն էր ի գործ առաջխաղացնել սոլիդարության վրա հիմնված հարաբերություններ և ազլոմերացիայի տարբեր համայնքերի միջև ռեսուրսների արդյունավետ բաշխում իրականացնել: Օ դ'Ազուրն այժմ պլանավորում է իր ծառայությունների որակի և ջրի սակագների հետագա ստանդարտիզացիան ողջ քաղաքային ազլոմերացիայով⁴⁰:

Դեպքի քննություն N17. Նոթինգհեմ, Միացյալ Թագավորություն – Էներգամատակարարում

«Ռոբին Հուդ Էներջին» Նոթինգհեմի քաղաքային Էներգամատակարարող ընկերություն և պատշաճ աշխատավարձ վճարող գործատու է: Այն ստեղծվեց 2015 թվականին՝ Էներգետիկ աղքատության դեմ պայքարելու և

երկրի խոշոր էներգետիկ ընկերություններին այլընտրանք հանդիսանալու. ի տարբերություն վեց մասնավոր ընկերությունների, քաղաքային մատակարարողն առաջարկում էր գնային թափանցիկություն, իսկ մասնավոր բաժնետերեր ունենալն ու տնօրեններին պարգևավճարներ տրամադրելն արգելված էր լինելու:

Այսօր արդեն ընկերությունը համագործակցում է Միացյալ Թագավորության այլ 9 քաղաքներում ստեղծված նմանատիպ հանրային հիմնարկների հետ, որոնք առաջարկում են մատչելի սակագներ բոլոր բնակիչների համար: Այսպիսի հանրային համագործակցությունների միջոցով Ռոբին Հուդ. Էնրոքին արդեն ծառայություն է մատուցում երկրի մոտ 130.000 բնակիչների: Ընկերությունը ներդնում է իր ստացված շահույթը (2019-ին՝ £200,000) վերականգնվող և մատչելի էներգետիկ ծառայությունների մեջ՝ մասնավորապես տրամադրելով «ջերմամեկուսացված տների» գեղչեր: Ընկերությունը նաև համագործակցում է սոցիալական բնակարանների միության հետ և օգնում է համայնքներին կազմակերպել իրենց էներգաէֆեկտիվությունը⁴¹:

Վերջաբան. շարժվելով առաջ

Վերահամայնքայնացումն ու համայնքայնացումը մասնավորեցման և արդյունահանող տնտեսության դեմ պայքարելու հզոր գործիք է: Մինչդեռ պետություններից շատերը ձախողում են ծայրահեղ անհավասարության և բնապահպանական ճգնաժամի դեմ պայքարը, շատ քաղաքներ նախաձեռնում են այս խնդիրների լուծումն ու իրենց բնակիչների կյանքի բարելավման քայլեր են ձեռնարկում: Տեղի բնակիչներն ու աշխատողները առաջինն են շահում, եթե ստիպում են քաղաքային իշխանությունների չեղարկել մասնավորեցումն ու ժողովրդավարացնել հանրային ծառայությունները:

Որոշ շատ առաջեմ համայնքներ իրենց քաղաքականությունը կառուցում են այնպես, որպեսզի հանրային ծառայություններում առաջնահերթությունը տրվի հասարակության ամենամարգինալիզացված խմբերին, որոնցից են ոչ փաստաթղթավորված միգրանտները, հաշմանդամություն ունեցողներն ու ցածր եկամուտ ունեցող ընտանիքները: Ավելի

ժողովրդավար քաղաքները կիսում են որոշումներ ընդունելու մանդատը շահագրգիռ կողմերի հետ և հիմնադրում են կառավարման մոդելներ, որոնցում ներկայացված են ծառայությունից օգտվողները, աշխատողները, քաղաքացիական հասարակությունը և հետազոտող կազմակերպությունները: Հանրային կառավարումը երբեմն ունի վերևից ներքև կառավարվելու և իրական խնդիրներն անտեսելու համբավ: Բայց այստեղ ներկայացված դեպքերից շատերը ցույց են տալիս, որ հնարավոր է ժողովրդավարական նորարարությունների միջոցով հանրային ծառայությունը դարձնել իսկապես «հանրային»: Սրանք 21-րդ դարի հանրային կառավարման մեջ կենսական ներդրումներ են:

Քաղաքային իշխանությունները ժողովրդավարական հանրային կառավարում ստեղծելու առաջամարտիկներ են: Մունիցիպալ փորձը, կառավարմանը մասնակցող քաղաքացիների խորհուրդ. ներգրավելուց մինչև աշխատողների ներգրավմամբ դիվերսիֆիկացված հանրային կառավարում, ոգեշնչում է երկրներին ավելի մեծ մասշտաբով հանրային կառավարման անցնելուն: Ներքևից վերև կառավարվող նման նախաձեռնությունները ոչ միայն ստեղծում են այդքան պահանջված դարձած կոլեկտիվ կառավարումը, բայց նաև հզոր հիմք են հանդիսանում բոլոր մակարդակներում հանրային սեփականությունն առաջ մղելու համար:

Այնուամենայնիվ, մեր պայքարը մղվում է վիթխարի կորպորատիվ ուժերի դեմ, որոնք իրենց հերթին միասնականորեն պայքարում են հանուն շուկայում էլ ավելի գերակա դիրքի, մրցակցության և մասնավորեցման համար: Եվրամիության Ծառայությունների դիրեկտիվը (հայտնի է նաև որպես Բուքսթեյնի դիրեկտիվ) միայն վերջին տասնամյակում առաջ է մղել ազատականացումը ծառայությունների լայն շրջանակների համար: 2018թ. խոշոր բիզնեսների լոբբինգին գրեթե հաջողվեց ստիպել ԵՄ-ին ընդունել Ծառայությունների ծանուցման Դիրեկտիվը: Միայն քաղհասարակության միասնական և ուղղորդված ջանքերի շնորհիվ հաջողվեց հետաձգել Դիրեկտիվի ընդունումը մեկ տարով: Սակայն 2020 թ. մարտին Եվրահանձնաժողովի անդամները նոր շունչ հաղորդեցին Դիրեկտիվին՝ նախաձեռնելով «Միասնական շուկայի կիրարկման գործողությունների ծրագիրը»: Ծրագրի կայացման դեպքում այն կարող է

տապալել կորպորատիվ հսկաների, օրինակ Airbnb-ի և Քարֆուրի գործունեությունը կարգավորելու քաղաքների ժողովրդավար իրավունքը⁴²:

Առևտրային ու ներդրումային անթիվ համաձայնագրերը միջազգային կորպորացիաների համար հանդիսանում են պետությունների հանդեպ միլիոնավոր, նույնիսկ միլիարդավոր դոլարների դատական ու արբիտրաժային հայցեր ներկայացնելու իրավական գործիք այն դեպքում, եթե պետությունները, օգտագործելով իրենց ժողովրդավարական իրավունքը, հանկարծ ընդունեն որոշումներ, որոնք բացասաբար կազդեն կորպորացիաների ապագա շահույթի վրա: Այս համաձայնագրերից որոշները, ինչպիսին է ԵՄ Էներգետիկ խարտիայի Համաձայնագիրը, բացահայտորեն օգտագործվում են բնապահպանական քաղաքականությունը տապալելու նպատակով⁴³: Բացի այդ, քանի որ քաղաքային ու համագործակցային կազմակերպությունները ստիպված են մրցակցել խոշոր բիզնեսի հետ, փոքր մասշտաբի նախաձեռնությունները հիմնականում մեծ հաջողություն չեն կարողանում գրանցել: Սրա ցավալի օրինակներից է դանիական, ինչպես նաև գերմանական Էներգետիկ կոոպերատիվների անհայտացումը ագրեսիվ մրցակցության պատճառով⁴⁴:

2008 թ. ֆինանսական ճգնաժամին հետևած կոշտ խնայողության քաղաքականությունների արդյունքում զգալիորեն կրճատվել են համայնքային բյուջեները և այդ իմաստով չափազանց կարևոր է վերափոխել հանրային ռեսուրսների ծախսը: Ինչպես ցույց տվեց COVID-19 համավարակը, հանրային ծառայությունները մեր հանրության ողնաշարն են: Բայց որպեսզի հանրություններն իսկապես կարողանան լիարժեքորեն ապավինել այս ծառայություններին, մանավանդ ճգնաժամի պայմաններում, պահանջվում է բավարար ֆինանսավորում: Եվ չնայած որոշ կառավարություններ խոստացել են ավելացնել հանրային ծախսերն առողջապահության ոլորտում, պետք է ուշադիր լինենք, որպեսզի այդ գումարներն իսկապես բարելավեն ծառայությունները, այլ ոչ թե օգտագործվեն ՊՄԳ և այլ մասնավորեցման նախաձեռնությունների առաջխաղացման վրա:

Ներկայիս մոդելում հանրային ֆինանսներն օգտագործվում են ռիսկերը չեզոքացնելու և մասնավոր շահույթն ապահովելու համար:

Հանրությունը դրա համար թանկ գին է վճարում: Ինչպես նշում է Թոմաս Մարուան՝ հանրային ֆինանսական ինստիտուտներն աշխարհով մեկ ունեն 73 տրիլիոն ԱՄՆ դոլար, որի կեսից ավելին գտնվում է մասնավոր բանկերի ձեռքերում⁴⁵: Ընդհանուր առմամբ խոսքը գնում է համաշխարհային ՀՆԱ-ի 93%-ին հավասար գումարի մասին: Այդ իսկ պատճառով, շատ ավելի արդյունավետ կլիներ, եթե քաղաքներն ու պետությունները կարողանային ձեռքագատվել մասնավոր միջնորդներից և ուղղակիորեն ներդնեն այդ գումարները հասարակության մեջ: Հանրային ներդրումները, զուգորդված պրոգրեսիվ հարկման հետ, կկարողանան զարգացնել տարածքային համերաշխությունը և իրականություն դարձնել համընդհանուր հանրային ծառայությունները: Եթե որակյալ հանրային ծառայությունները լինեն համընդհանուր, տարածվելով տեղականից դեպի պետական, և գյուղականից դեպի քաղաքային, դրանք կկարողանան վերաբաշխել հարստությունը և պայքարել աշխարհագրական անհավասարությունների դեմ: Եթե սոցիալական շարժումները միասին պահանջեն ժողովրդավար հանրային կառավարում տեղական և պետական մակարդակներում, մենք կկարողանանք փոխել այն համակարգը, որի վրա հիմնված են տնտեսությունն ու հանրային ծառայությունները: ԱՄՆ-ում մի շարք քաղաքներ առաջ են մղում բանկերը և Էներգետիկ համակարգերի տեղական սեփականություն դարձնելու գաղափարը: 2019թ. սկսած երիտասարդական Սանրայզ շարժումը, տարբեր արհմիությունների և նախագահի թեկնածու Բեռնի Սանդերսի հետ պայքարում էին Նոր Կանաչ Համաձայնագրի համար, որի կենտրոնում է Էներգետիկ, բնակարանային և ֆինանսային ոլորտների հանրային կառավարումը: COVID-19 ճգնաժամն ավելի խորացրեց այս պայքարի անհրաժեշտությունն ու սրությունը: Երբ քաղաքային իշխանությունները միավորվում են սոցիալական շարժումների հետ, նրանք կարող են վերափոխել երկրի քաղաքական օրակարգը⁴⁶:

Ոգեշնչող են նաև Հարավաֆրիկյան արհմիություններն ու քաղհասարակությունը, որոնք ստիպում են կառավարությանը վերակառուցել աշխարհի ամենամեծ էլեկտրաէներգիայի ընկերություններից մեկը՝ Էսկոմը, դարձնելով այն ամբողջովին հանրային և մարդկանց օգտին ծառայող⁴⁷: Միացյալ Թագավորությունում, չնայած ընտրություններին պարտությանը, Լեյբորիստական կուսակցության

Մանիֆեստը հանրային ծառայությունները հետ վերցնելու և դրանց կարողությունները ուղղակիորեն տեղի բնակչությանը ծառայեցնելու հանրային պահանջի լավ օրինակ էր:

Այս հետազոտությունն ապացուցում է, որ երբ հիմնարար ծառայությունները պատկանում են հանրությանը և կառավարվում են ժողովրդավար կերպով, դրանք արդյունավետորեն ամրապնդում են հանրային հարստությունը, տեղայնացնում են տնտեսությունը և ծառայում են մարդկանց կոլեկտիվ կարիքներն: Ժողովրդավարական հանրային տնօրինման պահանջը պետք ընդլայնվի ավելի բարձր մակարդակների, պահանջելով համընդհանուր մատչելիություն դեպի անխտիր բոլոր հանրային ծառայություններ, որպեսզի յուրաքանչյուր բնակիչ կարողանա ունենալ արժանապատիվ և բարեկեցիկ կյանք:

Այսօրվա միջավայրում, ուր ռասիզմը, ֆաշիզմը և ծայրահեղ աջերը բարձրունքում են գտնվում, անհրաժեշտ են մարդկանց ու մոլորակի համար աշխատող կենսական համակարգային լուծումներ, որպեսզի վերականգնվի մեր ժողովրդավարությունը, հանրությունն ու տնտեսությունը. հարկավոր են լուծումներ, որոնք հիմնված կլինեն համերաշխության, զորակցության և համագործակցության վրա, և որոնք կաշխատեն բոլորի, այլ ոչ թե մի քանիսի համար: Մեր հանրային ապագան պետք է լինի համայնքերի, այլ ոչ թե կորպորացիաների ձեռքում:

- Kishimoto, S. and Petitjean, O. (2017). *Reclaiming Public Services: How citizens and cities are turning back privatisation*, Amsterdam: Transnational Institute. <https://www.tni.org/en/search?search=publication%20reclaiming%20public%20services>
- These forces include the International Monetary Fund, the World Bank, the World Trade Organisation, the Organisation for Economic Cooperation and Development, the European Union, national Chambers of Commerce and trade ministries, transnational corporations and the lobbies that represent them, and the 'Big Four' audit firms Deloitte, PricewaterhouseCoopers, Ernst & Young and KPMG, among others.
- See Chapter 3, 'Canada: Local insourcing in face of national privatization push' by Robert Ramsay.
- Report about PFI and PF2 by the National Audit Office, January 2018. <https://www.nao.org.uk/report/pfi-and-pf2/>
- HC Treasury Committee, Private Finance Initiative, Seventeenth Report of Session 2010–2012, HC 1146, July 2011, paragraph 48.
- Refers to figures published by the municipality of Valladolid: <https://www.valladolid.es/es/actualidad/noticias/aquavall-consigue-beneficios-13-millones-euros-destinados-i>
- See Chapter 5, 'Africa: Private waste service failure & alternative vision' by Vera Wegmann.
- 8 See Chapter 1, 'Norway: Bankruptcy sparks more than 100 cases of remunicipalisation' by Nina Monsen and Bjørn Pettersen.
- See Chapter 4, 'Outsourcing: Problems without benefits? The Danish experience without outsourcing and remunicipalisation' by Thomas Enghausen.
- Report of the Special Rapporteur on extreme poverty and human rights, United Nations General Assembly, September 2018. <https://undocs.org/A/73/396>
- See Chapter 2, 'Paris celebrates decade of public water success' by Celia Blauel.
- Portal Rasmi Kerajaan Negeri Selangor, "Inisiatif Peduli Rakyat", available at: <https://www.selangor.gov.my/index.php/pages/view/2534> Also see Chapter 7, 'Putting the 'public' in public services: (Re)municipalisation cases in Malaysia and the Philippines' by Mary Ann Manahan and Laura Stegemann.
- For more information, see: <https://interaktiv.morgenpost.de/berlinmieten/>
- Paul, U. (2019), Deutsche Wohnen: Warum das Urteil zur Karl-Marx-Allee für Berlin positiv ist, Berliner Zeitung, 19 April. <https://www.berliner-zeitung.de/berlin/deutsche-wohnen-warum-das-urteil-zur-karl-marx-allee-fuer-berlin-positiv-ist-32402122>
- rbb 24 (2019), Land Berlin kauft 6.000 Wohnungen zurück, 27 September. <https://www.rbb24.de/politik/beitrag/2019/09/berlin-kauft-6000-wohnungen-zurueck.html>
- For more information, see: <https://stadtenwicklung.berlin.de/wohnen/wohnraum/mietendeckel/>
- See Chapter 6, 'National, regional and local moves towards public ownership in the UK' by David Hall.
- ソウルの市民民主主義 日本の政治を変えるために、白石孝(編著)、2018年
- See Chapter 8, 'Rebuilding public ownership in Chile: The social practices of the Recoleta commune and the challenges to overcoming neoliberalism' by Alexander Panes Pinto.
- Rui, T. (2016), Relatório da Pesquisa de Avaliação Preliminar do programa 'De Braços Abertos', Plataforma Brasileira de Política de Drogas. <http://pbpd.org.br/wp-content/uploads/2016/12/Pesquisa-De-Bra%C3%A7os-Abertos-1-2.pdf>
- For more information, see: http://www.remunicipalisation.org/#case_Ramos%20Arizpe
- Russell, B. (2019). This small German town took back the power and went fully renewable. Ponderwall. <https://ponderwall.com/index.php/2019/12/08/wolfhagen-german-town-fully-renewable/>
- See Chapter 10, 'A new water culture: Catalonia's public co-governance model in the making' by Míriam Planas and Juan Martínez.
- For more information, see: <https://municipalpower.org/articles/plymouth-energy-community-a-story-about-energy-transition-and-social-justice/>
- See Chapter 12, 'The labour dimension of remunicipalisation: Public service workers and trade unions in transition' by Daria Cibrario.
- See Chapter 1, 'Norway: Bankruptcy sparks more than 100 cases of remunicipalisation' by Nina Monsen and Bjørn Pettersen.
- Ibid.
- Roth, L and Shea Baird, K. (2019), Municipalism and the Feminization of Politics. Roarmag. Issue 6. <https://roarmag.org/magazine/municipalism-feminization-urban-politics/>
- Billing, L. (2020), What does feminist leadership look like in a pandemic?, Medium. <https://leila-billing.medium.com/what-does-feminist-leadership-look-like-in-a-pandemic-35b2ee0eb994>
- Quiray, K.M. and Manahan M.A. (2012), Bridging the Gap in Water Service Provision in the Philippines: New Roles for Communities, Focus on the Global South. <https://focusweb.org/bridging-the-gap-in-water-service-provision-in-the-philippines-new-roles-for-communities/>
- See Chapter 9, 'USA: Communities providing affordable, fast broadband Internet' by Thomas M. Hanna and Christopher Mitchell.
- See Chapter 5, 'Africa: Private waste service failure & alternative vision' by Vera Wegmann.
- See Chapter 15, 'Putting energy democracy at the heart of a Green New Deal to counter the climate catastrophe' by Lavinia Steinfort.
- For more information, see: <https://municipalpower.org/%20articles/how-dobrich-s-pioneering-the-energy-transition-%20in-bulgaria/>
- Energy poverty relates to the inability to properly light, heat or cool one's home, due to a combination of high energy prices, low incomes and inadequate housing. <https://righttoenergy.org/>
- For more information, see: http://resilient-cities.iclei.org/fileadmin/sites/resilient-cities/files/Images_and_logos/dumangas_climate_field_school.pdf
- Cadiogan, A. (2016), A test of local climate adaptation, Rappler, 29 November. <https://www.rappler.com/moveph/test-local-climate-adaptation>
- Binctin, B. (2020), Quand la protection de l'eau se transforme en repas de qualités pour les écoliers, Observatoire des Multinationales. <https://multinationales.org/Quand-la-protection-de-l-eau-se-transforme-en-repas-de-qualites-pour-le-s>
- See Chapter 11, 'The empire strikes back: Corporate responses to remunicipalisation' by Olivier Petitjean.
- For more information see http://www.remunicipalisation.org/#case_Nice
- Presentation by Mark Bramah, Consultant at Robin Hood Energy: https://www.cn2019.org/fileadmin/inhalte/Presentations/WS4_The_city_as_an_energy_services_provider.pdf
- Hoedeman, O. (2020), How EU rules are getting in the way of progressive public policy – and how cities are fighting back. openDemocracy. <https://www.opendemocracy.net/en/economy/how-eu-rules-are-getting-in-the-way-of-progressive-public-policy-and-how-cities-are-fighting-back/>
- Eberhardt, P. and Olivet, C. (2018), One Treaty to rule them all. Transnational Institute and Corporate Europe Observatory. https://www.tni.org/files/publication-downloads/one_treaty_to_rule_them_all.pdf
- Wierling, A. et al. (2018), 'Statistical evidence on the role of energy cooperatives for the energy transition in European countries'. Sustainability 10(9). <https://www.mdpi.com/2071-1050/10/9/3339>
- Marois, T. (2019), 'Public Banking on the Future We Want', in Public Finance for the Future We Want. Amsterdam: Transnational Institute. <https://www.tni.org/en/publicfinance>
- For more information, see: <https://berniesanders.com/en/issues/green-new-deal/>
- For more information, see: <https://www.new-eskom.org/>

